

335

μ-81



Հ - 81.

Լ. Ռ. Ա. ԶԵ-Ի զրադարձն

№ 31

# ԽՈՐԱՄԱՆԿ

ԿԱՐԳԵՐ

Թուս. թարգմ. տիկ. Հրանոյշ

ՏԵՂ Ե 10 ԿՈՂ.

ԾԻՖ ԼԻԶ  
1997

335  
[u-81]

№ 31 « З. У. В. У. 2 » - в. 9. 9. У. 9. У. 9. У. № 31

25 SEP 2006

# ԽՈՐՎԱՄԱՆԿ

# ԿԱՐԳԵՐ

Թեսու. բարգիլ. տիկ. Հրանոյշ



$\theta \vdash \emptyset \not\vdash U$ .



13.05.2013 29  
ՏԵՍ ՏԵՍ

26.600

36998-62

### ԹԻՖԼԻՍ

Ելեքտրական «ՀԵՐՄԵԿ» ընկ., Մալար. փող., № 5.  
(226)

## ԽՈՐԱՄԱՆԿ ԿԱՐԳԵՐ

Կառվ կտիրանաս գու քո իբաւունքին

Մեր զիւղում Ստեփան անունով մի զարմանալի մարդ է ապրում։ Դիւղացիները նրան շատ են յարգում։ Նա շատ բանիմաց, բարեխեղճ և ձշմարտասէր է։ Ոչ ոքից նո չի վախենում։ Առանց քաշւելու ամենքի երեսովն է տալիս ճշմարտութիւնը։ Վայ է, թէ ընդհարւի գրագրի, տանուտէրի և ուրեազնիկի հետ։ Զարմանալի լեզու ունի. կասես խօսքերը բոշի նման գրպանում ունի պահած։

Նրանք նրան մի խօսք են ասում, նա նրանց քսանն է ասում. ամենքի պատասխանը կտայ, այնպէս որ բոլորին կտապալէ, կխայտառակէ, կամանչացնէ ամբողջ ժողովրդի առաջ։

Իսկ երբ մեզանից մէկն ու մէկը փորձանքի մէջ է ընկնում—կամ մեծաւորներն են ճնշում կամ մէկ ուրիշ բան է պատահում—Ստեփանը պատրաստ է իր ամենավերջին ունեցածը տալու, թէ խօսքով և թէ գործով օգնելու. նա ոչնչից չի վախենում։ Նրա խորհուրդներին էլ լսում են, որովհետև բացի նրանից մեզանում ոչ ոք լու չի հասկանում բոլոր գործերը։

Ենթադրենք մէկին մի խնդիր է հարկաւոր գրել, կամ միայն խորհուրդ է հարկաւոր. բոլորը վագում են

Ստեփանի մօտ: Ոչ ոքին նա չի մերժում: Ահա այդ պատճառով էլ մեր գիւղի մեծաւորները նրան սասափիկ ատում են: Ստեփանը նրանց աշքի փուշն է դարձել. շատ անգամ է նա նրանց խարդախութիւններն ու զանազան խորմանկութիւնները լոյս աշխարհ հանել:

Օ՛հ, ի՞նչպէս են նրանք հայհոյում Ստեփանին. Աստւած ազատէ, բայց վախենում են նրա հետ գլուխ դընել. նա շատ համարձակ ու ճարպիկ է. խօսքի տակ չի մնում: Մի հասարակ բանի համար այնպիսի աղմուկ կը բարձրացնէ, որ նրանք կիոշմանեն նրա հետ գլուխ դընել: Ստեփանը—ինքը մեր նահանգից չէ, հեռու տեղից է և մեր կողմերը իրա կամքով չէ եկել—նրան աքսորել են այստեղ՝ հակողութեան տակ: Իսկ դրանից առաջ, որտեղ ասես, որ նա չի եղել. համարեայ ամբողջ Ռուսաստանը ման է եկել. ամեն տեսակ թշւառութիւններ է կրել. նա և ողորմութիւն է ինդրել և բանտ է նստել:

Բայց իհարկէ վատ գործերի համար չէ նա բանտ նստել, այլ այն պատճառով, որ իր համագիւղացիներին պաշտպան է հանդիսացել: Այստեղ սով է եղել, իսկ իշխանութիւնը ոչ մի օգնութիւն չէ ցոյց տւել. համայինքը Ստեփանին ուղարկում է Պետերբուրգ իշխանութեան վրա գանգատւելու և օգնութիւն ինդրելու: Իսկ Պետերբուրգում օգնութեան փոխարէն Ստեփանին բռնում են և էտապով տուն ուղարկում. նա ճանապարհոց փախչում է նորից Պետերբուրգ. այստեղ նրան կրկին բռնում են, բանտ նստեցնում և վերջն էլ աքսորում ուղիկանական հակողութեամբ, պատճառաբանելով, թէ նա գիւղացիներին գրգռում է իշխանութեան գէմ, որ նրանք գիւղացիները չեն կարողանում խաղաղութեամբ սովոր մեռնել և միշտ իշխանութեանը անհանգստացնում են:

Ես շատ անգամ եմ Ստեփանի հետ խօսել մեր դա-

ուն վիճակի, մեր թշւառ կեանքի մասին: Իմ ամբողջ կեանքում ես չեմ մոռանաց Ստեփանի հետ ունեցած մի խօսակցութիւն: Հէնց այդ խօսակցութեան մասին է, որ ուզում եմ ձեզ պատմել:

Մի անգամ Ստեփան բիծայի հետ մտանք պանդոկի: Մի ցուրտ օր էր: Մենք շըջում էինք գաւառը, համարեա 8 վերստ ման էինք եկել: Սաստիկ մրսել էինք. մտանք պանդոկ մի քիչ տաքանալու և մի-մի բաժակ օղի խմեցինք:

— Լաւ կլինէր, ասում եմ ես Ստեփանին, ցրտից յետոյ մի մի բաժակ էլ խմել:

— Լաւ կլինէր, ասում է Ստեփանը, միայն թէ ամեն տեղ կառավարութիւնն իր ազնւականներով և վաճառականներով մեր բկին է չոքել:

— Իսկ ի՞նչ գործ ունեն ազնւականներն ու վաճառականները: Զէ որ մեր փողն է: Ունիս-խմիր...

— Իսկ եթէ չունիս: Հէնց բանն էլ նրանումն է, որ մեր գրաբանը այնքան էլ հաստ չէ: Իսկ եթէ չլինեին վաճառականները, ազնւականները և... այն ժամանակ մեզանից իւրաքանչիւրը միևնոյն փողով և ինքը մի բաժակ կիսմէր և դեռ երեք հոգու էլ կիւրասիրէր:

— Է՞հ. ի՞նչ ես խօսում, Ստեփան, ով կարող է քո ձեռքից խլել բաժակը, եթէ դու քո փողերն ես վճարել:

— Վճարել: Բայց ի՞նչով վճարել: Հասկացիր, սիրելիս, դու, ենթագրենք, 8 կոպէկ ունիս, այդքան փողով դու իսկապէս պէտք է 4 բաժակ ստանայիր, իսկ դրա փոխարէն քեզ տալիս են միայն մէկը: Ուրեմն դուրս է գալիս, որ երեք բաժակը քո քթի տակից խլում են. ուրեմն հէնց որ դու մի բաժակ օղին խմում ես, երեք բա-

ժակն էլ վաճառականները, ազնւականներն ու.... է քո  
կողքին կոնծում, հէնց քո փողով:

Շշմեցրեց նա ինձ իր խօսքերով:

— Իսկ այդ ինչպէս, հարցնում եմ ես: Զէ՞ որ այդ-  
պիսով և... և չինովիկները և ազնւականները, բոլորը  
հարբած պիտի լինին շարունակ: Հանաք բան է, ինչ,  
ամեն մէկի հետ երեք բաժակ խմել: Ինչքան մարդիկ  
են Ռուսաստանում ամեն օր խմում...

— Բանն էլ հէնց նրանումն է, որ դրանք գինին չեն  
խմում, այլ քո փողերը իրանց գրպանն են դնում: Հաս-  
կացար:

— Մի քիչ դժւար է, չեմ հասկանում: Ասա, ինչ  
կերպով:

— Ահա թէ ինչպէս. այժմ օղու մենավաճառութիւն  
է (մօնօպօիխա) մացրած, ամեն տեղ արքունական գի-  
նու և օղու խանութներ են բաց արել: Գինին գանձա-  
րանն է վաճառում: Առաջ օղին գործարանատէրերն ի-  
րանք էին վաճառում, միայն գանձարանին հարկ էին  
(ակաց) վճարում: Գործարանատէրը մէկ վեդրօ օղին  
կաբող էր 60 կոպէկով ծախել և օգուտ ստանալ, ստ-  
կայն նա գանձարանին պէտք է ամեն մի վեդրօի հա-  
մար 4 լ. 40 կ. հարկ վճարէ, Մանրավաճառը օղին առ-  
նում էր գործարանատիրոջից և մի բան էլ ինքն էր ու-  
զում շահել «իր աշխատանքի փոխարէն», և ահա նա մի  
վեդրօն ծախում էր ոչ թէ 5 ըուբլու այլ 6-ի: Ըստ եւ-  
րեսյթին հարկը վճարում էր գործարանատէրը, ստկայն  
նա այդ փողերը վաճառականից է վեցինում: Վաճառա-  
կանն էլ այդ փողերը իր գրպանից չէր վճարում, այլ  
հաւաքում էր մեղանից, երբ նրանցից օղի էինը գնում  
փոքք չափերով: Ուրեմն առանց ակցիզի մի բաժակը  
կարժենար ոչ թէ վեց, այլ մէկ ու կէս-երկու կոպէկ:

Ամեն մի վեդրօից 4 ըուբլի 40 կոպէկը գանձարանն էր  
գնում:

— Ի՞նչ ահագին գումար հաւաքած կլինեն այդպի-  
սով: Սակայն դա առաջ էր. այժմ, ինչպէս լսել եմ,  
ակցիզը վերացւած է. բայց ինչո՞ւ օղին չէժանացաւ:

— Լսիր, թէ յետոյ ինչպէս եղաւ: Գանձարանը  
հազարներ էր ստանում ակցիզից, բայց դա մինիստր-  
ներին դեռ էլի քիչ թւաց: Նրանք վճռեցին, որ իրանք  
վաճառեն օղին, որպէսզի աւելի շատ օգուտ ստանան: Այ-  
ժմ կառավարութիւնն ինքն է գործարանատէրերից օղին  
գնում. այժմ վերջիններս իրաւունք չունին մասնաւոր  
մարդկանց օղի ծախելու. ամեն մի վեդրօին 7 լ. 60 կ.  
գին են նշանակել: Մինխատըն ինքը գրել է, որ մի վե-  
դրօ օղին իրանց վրա նստում է ընդամենը 2 ըուբլի,  
իսկ ծախւում է 7 լ. 60 կոպէկով, իսկ մի բաժակը 8  
կոպէկով. բանից դուրս է գալիս, որ մենք օղին առնում  
ենք. իրա արժէքից չորս անգամ աւելի թանգ գնով:  
Այսպիսով չորս բաժակի փոխարէն մենք միայն մէկն  
ենք ստանում:

— Գանձարանն այսպիսով շատ փող է ստանում  
օղուց:

— 1902 թւականին, մինխատի հաշւով, գանձա-  
րանը 463 միլիօն ըուբլի պիտի ստանար օղուց: Հեշտ է  
ասել 463 միլիօն: Եւ այդ փողերը մենք համարեա մեր  
գրպանից ենք տալիս: Մենք օղին խմում ենք, բայց  
չենք նկատում, որ առանց այլեալութեան աւելորդ փող  
ենք վճարում գանձարանին:

— Այ քեզ բան,— ասում եմ ես: Սակայն մի մեծ  
դժբաղդութիւն չէ օղու թանկանալը: Բնդիակառակը  
նա թոյնից ազատում է զիւլացուն: Աստւած մի արաօ-  
ցէ, եթէ նա էժան լինէր, ով զիտէ ինչ չափով կը

տարածւէր հարբեցողութիւնը: Որքան ես լսել եմ, մի-  
նիստրները իմանալով, որ օդին վասակար բան է, վը-  
ճուել են թանկացնել, որ գիւղացին քիչ խմէ:

— Ի՞նչպէս չէ, դու էլ հաւատում ես:

Խօսքերով նրանք քեզ այնպէս կհաւատացնեն, որ  
դու նրանցից նոյնիսկ շնորհակալ կլինես, բայց արի  
տես, թէ իսկապէս տակից ինչ է դուրս դալիս: Եթէ  
1894 թւականին առաջին անգամ մենավաճառութիւնը  
հաստատեցին, վճռեցին, որ ոչ մի տեղ, բացի արքու-  
նական խանութներից, օդի չվաճառէի: Սակայն չկարո-  
ղացան այնքան խանութ բաց անել, ինչքան որ առաջ  
գինետուն կար:

Եւ այն նահանգներում, ուր ամենից առաջ ար-  
քունակտն մենավաճառութիւնը հաստատեց, հաշւեցին  
թէ ինչքան օդի էր խմւած մի տարւայ ընթացքում.  
բանից դուրս եկաւ, որ աւելի քիչ էր խմւած, քան թէ  
առաջ: Ի՞նչ ես կարծում, սիրելիս, մինիստրն ուրախա-  
ցաւ: Ի՞նչպէս չէ: Նա իսկոյն շտապեց սխան ուղղել:  
1896 թւականից արքունական օդին սկսեցին տալ «կո-  
միսիայով» վաճառելու միենոյն գինետներին, կրպակ-  
ներին և պանդոկներին: Հետևեալ տարին հաշւեցին և  
տեսան, որ ոչ մի ժամանակ այնքան օդի չէր խմւած,  
որքան այդ տարին: Եւ մինիստրի սիրար հազիւ հաղ տեղն  
ընկաւ:

— Բայց չէ որ այժմ հակաալկօնօլական ընկերու-  
թիւններ են հիմնում, այդ բոլորն, ասում են, օդու վա-  
ճառութից ստացած փողերով են անում:

— Դա որ արդէն գլխովին սուտ է: Օղուց 400 մի-  
լիոնից աւել են ստանում, իսկ այդ ընկերութիւնների  
վրա ծախսում են ընդամենը 3 միլիոն: Բայց դու գեռ  
ականջ գիր, թէ ինչպէս է կառավարութիւնը հակա-

ալկօնօլական ընկերութիւնների մասին հոգ տանում: Շատ  
գիւղերի համայնքներ հաւաքւել են և համախօսականներ  
կազմել, թէ «մենք չենք ուզում, որ մեր գիւղերում  
գինետներ լինեն, և խնդրում ենք, որ իշխանութիւնը  
այդ մասին կարգադրութիւն անէ»: Բայց այս բոլորին  
մի պատասխան է եղել՝ «մերժել», «թողնել առանց հե-  
տեանքի»: Ո՛չ, կառավարութիւնը մեր բարօրութեան  
մասին բոլորովին չի մտածում, այլ աշխատում է, որ-  
քան կարելի է, շատ պլոկել: Բայց ի՞նչ ենք միայն օ-  
դու և գինու մասին խօսում: Միայն դրանց միջոցաւ  
չէ, որ գանձարանը մեզ քերթում է: Կառավարութիւ-  
նը հարկ է դրել, թէ ծխախոտի, թէ լուցկու, թէ նաւ-  
թի, թէ գարեջրի, թէ շաքարի և թէ ուրիշ շատ բանե-  
րի վրա: Նա այդ հարկերն հաւաքում է գործարանա-  
տէրերից ու վաճառականներից, որոնք, իհարկէ, իրանց  
գրպանից չեն վճարում, այլ ամբողջ ծանրութիւնը գը-  
ցում են գնողների վրա: Օրինակի համար վերցնենք հէնց  
շաքարը: Մենք ամեն կերպ խնայում ենք, մեր երեխա-  
ներին թոյլ չենք տալիս ուզածների չափ կրծել. շատ  
անգամ կծովի ենք խմում, շատ անգամ էլ հէնց մտիկ  
տալով, իսկ ուրիշ երկրներում մեր շաքարով կովերին  
են կերակրում: Մեզանում իւրաքանչիւր հոգի մի տար-  
ւայ ընթացքում գործ է ածում 11 ֆունտ շաքար, իսկ,  
օրինակ, Անգլիայում 105 ֆունտ. համարեա տանն ան-  
գամ աւելի: Բաւական քաղցր են ապրում նրանք մեզ  
հետ համեմատելով, այնպէս չէ, սիրելիս: Բայց ի՞նչն է  
գրա պատճառը: Առաջինը, որ մեզանում շաքարի վրա  
հարկ է գրած, իսկ երկրորդը՝ շաքարի գործարանատէ-  
րերը ամեն տարի սկզբեց որոշում են, թէ ինչքան շա-  
քար պէտք է բաց թողնեն Ռուսաստանի համար. և այդ

Նրա համար, որ շաքարը չափից դուրս շատ չինի եւ  
չէժանանալ:

Մէկը, օրինակի համար, ասում է, թէ «ես այսքան շաքար բաց կիրողնեմ մոռնաստանում ծախելու համար, դու՝ այսքան, միւսը այսքան. եթէ իմ գործարանի մեծութեան համեմատ շաքարս էլ շատ եղաւ, ես պարտաւորւում են ուղարկել արտասահման»: Եւ ի՞նչ ես կարծում: Գործարանատէրը մեզանից այնքան օգուտ է ստանում, որ իր աւելորդ շաքարը նա ամենաչնչին զընով կարող է արտասահմանում ծախել. միենոյն է նա իր օգուտն ստանում է:

իսկ՝ գանձարանը արտասահման ուղարկւող շա-  
շաքարի ակցիզը պակասեցնում է, նոյնիսկ պարզե էլ է  
տալիս—երկի նրանց ցոյց տւած ջանքերի համար։ Զար-  
մանալի չէ ուրեմն, որ անգիտական խողերը բաւական  
շաքար անուշ արին մեր հաշվին։ Մեզանում շաքարի  
ֆունտը 20 կոպէկ էր. իսկ միևնոյն շաքարը Անդլիա-  
յում 4 կոպէկով են ծախում։ Ռուսաց առածն առում է՝  
ծովի այն կողմը հորթը կէս կոպէկ արժէ, բայց մի րու-  
բլի բերողչէքն է—(за моремъ телушка—полушка, да  
рубль перевозка)—իսկ այստեղ բոլորովին հակառակն  
է լինում։

Ի՞նչ ես խօսում. չէ որ դա մի խկական աւագակութիւն է. ինչպէս է կառավարութիւնը այդ բանը թոյլ տալիս. Ինչպէս լսել եմ, մեզանում զործադուլի համար պատժում են, իսկ միթէ դա էլ զործադուլ չէ:

— Գործադուլը գործադուլ է, միայն օրինական հիմքերի վրա հաստատւած. եթե բանուուրը իր ընտանիքը սովից ազատելու համար գործադուլ է անում, կառավարութիւնն արգելում է: Բայց եթե վաճառականներն ու գործարաննատէրերն են գործադուլ անում, որ իրանց փո-

ըելն աւելի ուռեցնեն, այդ արդէն ուրիշ բան է: Ինքը կառավառութիւնը ամեն տարի ստուգում է շաքարագործարանատէրերի ելումունակ և հաստատում է, դրա համար էլ շաքարագործարանատէրերի կեղեքումները ոչ թէ աւագակութիւն է կոչւում, այլ բարձրագոյն հաստատած չափ ու սահման և այդ նրա համար, որ գործարանատէրերը մինչև կոկորդները թաղւեն լիութեան և բարիքների մէջ:

Մեղանում 18 հատ շաքարագործարան կայ, որոնք  
տարեկան իրաքանչիւր բուբլուն 15-ից մինչև 66 կոպէկ  
օգուտ են բերում: Եւ ի՞նչպէս կառավարութիւնը չընու-  
վանաւորէ շաքարի գործարանները, երբ կայսերական  
տան իշխաններից շատերը ահազդին դրամագլուխներ են  
պառկեցրել այդ գործարանների մէջ:

Ել ի՞նչ երկարացնեմ. որ բանին որ ուզում ես մօտեցիր, ինչ բան որ քեզ անհրաժեշտ է՝ ուտել, խմել, հագնել կամ տան համար մի բան առնել, այդ բոլորի համար քեզ կը երթեն, բայց կը երթեն «ազնւաբար» որպհետեւ քեզ ոչ ոք չի ստիպում. ցանկութիւն և միջոց ունես—առ, չունես—մի առնէ: Դու այդ հարկը վճարում ես անգիտակցաբար, կարծելով թէ վաճառականին վճարում ես քո տուած ապրանքի խսկական գինը:

Ահա այդ պատճառով էլ այդ հարկը կոչւում է «անուղղակի», որովհետև հանում են ոչ թէ ուղղակիքո զրաբանից, այլ աննկատելի և «ազնւաբար», ինչպէս որ ջերկիրը բազարում աննկատելի և հմտութեամբ քըսակիներ է հանում...

— Ճիշտ որ անուզդակի է: Նա նշանակում է. իսկ  
դու ուզում ես վճարէ, չես ուզում մի վճարէ. բանից  
գուրս է գալիս, որ վճարում ես ոչ թէ անմիջապէս  
գանձարանին, այլ սկզբում վաճառականին:

Ի՞նչ ասել կուզէ, բաւական խորամանկ կարգեր են: Հէնց ցանկութեան համեմատ առնելն էլ մի տեսակ աշ-քակապութիւն է. չէ որ առանց նաւթի, առանց լուց-կու, առանց օղու, առանց ծխախոտի և այլ բաների չի կարելի եօլայ գնալ, ուրեմն կամայ-ակամայ պէտք է առնես:

— Ճիշտ և ճիշտ այդպէս է. բայց միթէ միայն այդ է. քիչ կողմանակի հարկեր կան, որ իսկոյն չես նկատում և գլխի չես ընկնում: Հէնց օրինակի համար վերցնենք հասոյթը գրօշմանիշներից (գերծօնո՞ւ սօրո՞ւ)՝ անցագրերը կամ զանազան խնդիրները պէտք է անպատճառ դրոշ-մանշանով թղթի վրա գրւի: Վաճառականներն այժմ գիրդու համար փող են վճարում, որ իրաւունք ունե-նան առուտուր անել: Բայց նրանք այդ փողը հանում են խեղճ գիւղացու գրպանից: Օրինակ, գիւղացին գա-լիս է խանութ և մի փունտ կանեփի իւղ է խնդրում, խանութպանը տալիս է: — Իսկ քանի արժէ փունտը, հարցնում է գիւղացին: — 30 կոպէկ, ասում է ծախողը: — Աստւած չունիս, ինչու այդքան թանկ. միտդ է՝ մենք քեզ ձմեռը այդ իւղի փութը քանիսով էինք տալիս: —

Այս, տալիս էիք: Հէյ, բարեկամ, զանձարանին գիւ-ղայի համար ահազին գումար եմ վճարում, զեմստվօյին նոյնպէս, ահա թէ բանն ինչումն է:

Շատ անգամ դու քեզ ու քեզ միտք ես անում, թէ ինչու յանկարծ բոլոր բաները թանկացան, միւնոյն ժա-մանակ գլխի չես ընկնում, որ ի միջի այլոց հարկ էլ ես վճարում: Օրինակի համար, վաճառականը Անգլիա-յում մի մեքենայ է գնում և տուն է բերում. սահմանի վրա զանձարանը այդ մեքենայի համար 1000 բուբլի մաքսային հարկ է վերցնում: Մեքենայի ամեն մի փու-թին պէտք է 1 լ. 70 կ. մինչև 4 լ. 80 կ. հարկ վը-

մարեն: Միջին թւով արտասահմանից բերւող ապրանքի արժէքի իւրաքանչիւր բուբլուց 40 կոպէկ հարկ են վեր-ցնում: Շատ լաւ. այդ մեքենան, ենթադրենք, բերւեց եարօլաւսկի նահանգը: Այդ մեքենայով վաճառականն սկսում է չթեր գործել և ծախել ժողովրդին. այդ չթից սկսում են շապիկներ կարել, հագնել և ֆրֆուալով ման գալ. բայց մի բոպէ մտքերից չի անցնում, որ այդ չթին առնելիս, վճարեցին նաև այն 1000 բուբլին, որ վաճա-ռականը սախուած էր սահմանի վրա վճարել, որպէս մաքս:

Մի օրինակ ես. հարուստ գիւղացու մէկը խանութից մի ինքնաեռ է գնում, բայց նրա մտքովն անգամ չի անցնում, որ այն պղնձի համար, որից շինւած է ինքնա-եռը, գանձարանն իրա բաժինը վերցնում է: Սա արդէն հանքային հարկ է կոչւում:

Այսպիսով գիւղացին իր գնած ամեն մի չնչին բանի համար գանձարանին հարկ է վճարում: Ճիշտ է նա քիչքիչ է վճարում, միայն մի քանի կոպէկներով, բայց մի տարւայ ընթացքում գիւղացու գրպանից բուբ-լիներ են դուրս գալիս յօդուտ գանձարանի:

Այսպիսով զանձարանը միլիօններ է հաւաքում: Օրինակ, մեզանում մեխի փութը գիւղացին երեք բուբ-լու է առնում, իսկ գերմանացին միւնոյն մեխին իր երկրում 1 բուբլի 80 կոպէկ է վճարում: Այն քաթանը, որ մեզանում 50 կոպէկ արժէ, այնտեղ 30 կոպէկի կարելի է առնել:

Մի ուրիշ օրինակ էլ. ենթադրենք մեր հարևան-ները հաց ծեծելու մի մեքենայ են ուզում գնել. դրա համար նրանք մի հարիւրանոց պէտք է վճարեն, իսկ գերմանիայում այդ միւնոյն մեքենային 40 բուբլի կը-տան, 60 բուբլին էլ իրանց գրպանը կմնայ:

Այսպիսով դու գանձարանին հարկ ես վճարում, և գլխարկի, և կացինի, և բանի, և մնացած բոլոր բաների համար—եթէ դու ինքդ չես շինել: Եթէ նոյնիսկ կացինը դու ինքդ շինես, միևնույն է երկաթը պիտի առնես և հանքային հարկ վճառս:

Մի խօսքով՝ ուր էլ գնաս, ինչ էլ անես միևնույն բանը կտեսնես: Եւ այս բոլորը այնպէս հմտութեամբ է կարգի բերած, մոլոր խորամանկ կարգերը այնպէս են յարմարեցրած, որ թէ վաճառականը, թէ գործարանատէրը, թէ պանդոկապետը իրանց վճարած հարկը վերջի վերջոյ խեղճ գիւղացու կաշւից են հանում:

—Այ քեզ կարգեր, ասում եմ ես: Բայց գիտես ինչ, Ստեփան, միթէ այդ աղաները, ազնւականները վաճառականները ոչ օղի են խմում, ոչ լուցկի են վառում, ոչ շոր են հագնում: Երկի մի բան էլ նրանք են վճարում:

—Ի՞նչպէս թէ չեն վճարում. վճարում են, սիրելիս, վճարում, սակայն նրանց այդ վճարումները համեմատած գիւղացու վճարած փողերի հետ—ոչինչ է: Ախար, հասկացիր, որ եթէ ես քեզանից տամնապատիկ. հարիւրապատիկ հարուստ եմ, այդ չի նշանակում, որ ես քեզանից տասն անգամ, հարիւր անգամ աւելի եմ ուտում և խմում:

Իհարկէ այդ աղաները մեզանից շատ են խմում և իզուր տեղն են մեզ—գիւղացիներիս հարբեցողութեան համար կշտամբում: Ի՞նչ անէ խեղճ գիւղացին. քաղցած փորսկ, գարդի ձեռքից մի երկու թաս խմում է և խկոյն հարբում. պատէ պատ դիպչելով փողոց է գուրս գալիս. իհարկէ նրան բոլորն էլ տեսնում են: Սակայն չէ որ այդպիսի դէպքեր մեզ հետ տարին մի կամ երկու անգամ հազիւ պատահի: Իսկ աղաները թէն փողոց-

ներում չեն թաւալուում, բայց մեզանից շատ են կոնծում: Բոլորին էլ յայտնի է, որ նրանք մեր խմած օղուց երեք անգամ աւել միայն արտասահմանեան զանազան գինիներ են խմում. զրանց վրա աւելացրու նաև մեր Ռուսաստանի գինիները. նրանք իհարկէ մեր հասարակ հացից պատրաստած գինին բանի տեղ չեն դնում:

Ուրեմն իրաքանչիւր վաճառական կամ աղա գիւղացուց շատ ու շատ աւելի է գինի խմում և յետոյ էլ չի ամաչում, սկսում է խեղճ գիւղացուն հայոցել:

—«Դու խեղճ ես, աղքատ ես, որովհետև հարբում ես»:

—«Զէ, աղա, պէտք է նրան գիւղացին պատասխանէ, իմ խեղճութեան պատճառը օղի խմելը չէ... Դրա պատճառը ուրիշ բան է: Տես, գու ինձանից շատ ես կոնծում, բայց կարծեմ չես աղքատանում»:

Ստեփանն ու ես ծիծաղեցինք և սկսեցինք թէյ խմել:

—Այդ ամենը լաւ, ասում եմ ես Ստեփանին: Միայն մի բան. դու ասում ես, որ աղան և հարուստ վաճառականը գիւղացուց շատ է խմում, ուրեմն ակցիզ էլ շատ կվճարէ:

—Հէյ, ջահիւ, ջահիւ: Գիւղացիք դարձեալ հարուստաներից շատ են վճարում: Մի քիչ խելքիդ զօր տուր: Ռուսաստանում ազնւականներն ու վաճառականները իրանց կանանցով ու երեխաներով տասը միլիոն, էլ չեն լինի, իսկ հասարակ ժողովուրդը 120 միլիոնից էլ աւելի է: Եթէ ամեն մի հարուստ, ասենք գիւղացուց շատ է գինի խմում, զրա համար զանձարանին էլ շատ է վճարում, քան ամբողջ հասարակ ժողովուրդը: Տուրքը պէտք է ունեցւածքի համեմատ չափել: Օրինակ 100 ըուբլու զրամագլուխ ունիս, եթէ քեզանից չ բուրդի վերցնեն էլ դարձեալ ոչինչ, բայց

երբ գրպանումդ միայն մի ըռւբլի ունիս և այդ ըռւբլին էլ ձեռքիցդ խլում են—այդ արդէն տնաւրութիւննէ: Դու ինքդ դատիր: Մուրացկանը, որ գրպանում մի կոպէկ միայն ունի, մի արկղ լուցկի է գնում և դրա հետ միասին կէս կոպէկ տուրք է վճարում, ճիշտ այնպէս, ինչպէս հարուստը, որ միլիօների հետ է խաղում:

Ուրիշ երկրներում աշխատում են տուրքը եկամուտի համեմատ վերցնել. ինչքան շատ լինի քո եկամուտը, այնքան շատ կիխի քո տուրքը: Նոյն իսկ այս ձեզ այնտեղ այնքան էլ արդար չեն համարում: Ահա թէ ինչ են ասում այնտեղի բարի մարդիկ—խեղճերին պէտք է բոլորվին ազատել հարկերից, իսկ ունեղըներից՝ որքան շատ ունեն, այնքան էլ շատ հարկ վերցնել ամեն մի ըռւբլուց: Այնտեղ հարկերով ուզում են հաւասարեցնել մարդկանց, իսկ մեղանում հարկերով խեղճերին պլոկում են հաստափորների օգտին...

— Ճիշտ է, եղբայր, շատ ճիշտ է, ասում եմ ես, տեսնում եմ, որ խկապէս այս անուղղակի հարկը միեւնոյն է թէ գլխահարկ է, որովհետեւ վճարում են բոլոր մարդիկ... ԶԵ որ առանց ուտելու և առանց խըմելու չի կարելի եօլայ գնալ...

— Ե՞ն եղբայր, ի՞նչ գլխահարկի նման, գլխահարկից էլ դեռ ծանր է...

Տարօրինակ թւաց ինձ նրա այդ խօսքերը:

— Այդ ի՞նչպէս, ասում եմ ես, դու ասացիր, որ նա գլխահարկից էլ ծանր է, այդ ի՞նչու:

— Հէնց նրա համար, որ այդպէս է: Հասկանում ես. գլխահարկ վճարում էին արական սեռի ժողովրդագրական իւրաքանչիւր հողու համար, իսկ օղին, լուցկին, շաքարը—այդ արդէն ուրիշ բան է: Միթէ կանանց երե-

խաներին հարկաւոր չէ չիթը: Նրանք սախալւած են տղամարդկանցից էլ շատ գործածել զրանից: Գլխահարկը վերցնում էին միայն ժողովրդագրութեան ենթարկւածներից, այն էլ ի բաց առեալ կանանց: Ուրեմն այն հարկը աւելի ծանր է քան գլխահարկը:


— Ճիշտ որ այդպէս է: Իսկապէս որ աւելի ծանր է. դու ճշմարիտ ես ասում:

— Ի՞նչպէս թէ ճշմարիտ է, սիրելիս: Այնպէս է թւում թէ նա թեթև է, որովհետեւ նրան վճարում են ամեն անգամ, նոյն իսկ առանց նկատելու, թէ վճարում ես: Իսկ նա, բարեկամ, թեթև չէ: Ինչու միայն խօսքերով ենթագրել. դա կարելի է թւերով էլ բացատրել: Գանձարանը միայն 671 միլիօն ըռւբլի է վերցնում զանազան անուղղակի հարկերից: Վաճառականներն ու ազնւականները, ինչպէս քեզ ասացի, հազիւ 10 միլիօն լինեն: Եթէ նոյն իսկ հաշւելու լինենք, որ նրանցից իւրաքանչիւրը գանձարանին երեք անգամ աւելի է ճարում անուղղակի հարկեր, քան աշխատաւորները. այսուամենայնիւ նրանց բաժին ընկնում է միայն 156 միլիօն, իսկ շախատաւոր ժողովրդին 515 միլիօն: Իսկ այդ նշանակում է, որ իւրաքանչիւր մարդ պէտք է տարեկաս 4 ըռւբլուց աւելի հարկ վճարէ:

Ենթագրենք եթէ միջին թւով իւրաքանչիւր ընտանիք բաղկացած է 6 հոգուց, ուրեմն այդպիսի ընտանիքը տարեկան մի քսանինդինգանոց պէտք է դուրս տայ:

— Այ թէ բանն ինչումն է: Զարմանալի է, վճարում ես և չգիտես, որ վճարում ես... իսկ հաշիւը խօմ շատ պարզ է՝ ինչպէս համարիչի վրա.—ասում եմ ես:

— Ոչ միայն պարզ է.—աւելացրեց Ստեփանով, — այդ դեռ քիչ է: Մենք աղաներին ամեն քանից այնքան



շատ ենք տալիս, որ եթէ նըանք բոլորն ուտէին ու  
խմէին—վաղուց արդէն տրաբւած կլինէին, փողոցնե-  
րում հարփած քաշ կդային... Ճիշտ եմ ասում քեզ,  
դա մի սքանչելի հաշիւ է. իսկ իրականապէս, հաւա-  
տագիր, գիւղացին աւելի շատ է վճարում:

—ՀԵՅ, ԿԵՅ. ամենազարմանալին այն է, որ վճառ-  
բում ես և չես տեսնում.—ասում եմ ես:

—Այս, ասում է Ստեփանը, — ահա այսպիսով  
մենք — զիւղացիներս, ինչքան էլ որ շատ ենք վճարում,  
բայց ոչ մի բանից չենք արտնջում: Իսկ հարուստները,  
ապա համարձակվի նրանցից մի կոպէկ աւել առնել,  
իսկոյն գողգոռոց կը դցեն, թէ օրը ցերեկով իրանց  
թալանում են:

— Սակայն, եղբայր — ասում եմ ես, — այդ աղանձը  
այնպիսի բաներ են ուտում, որ գիւղացին խոկի զբախ-  
տի մէջ էլ չի ուտի: Օրինակի համար սուրճը, շոկո-  
լադը, զանազան ֆրանսիական քաղցրեղէնսերն ու ար-  
տասահմանեան գինիները:

զի՞ն որ այս բոլորը արտասահմանից են բերում:  
Միթէ զանձարանը թողնում է այս բոլորը ձրի անց-  
կացնելու: Եթէ գիւղացուց լուցկու, օղիի համար  
հարկ են վերցնում, հետևապէս աղաներից էլ պէտք է  
այդ բաների համար մի բան պոկել:

— իհարկէ պէտք է պոկել. — ասում է, — սրացը ց  
էլ ողորմածօրէն պոկում են: Առանց զբան չի կարելի:  
Այս էլ պէտք է ասել, որ գանձարանը իրան թշնամի  
չէ և որտեղից ինչ որ կարելի է վերցնել, աշքաթող չի  
անում: Նա, եղբայր, մեռածին էլ կը քերթէ, թողու-  
թիւն չկայ — տուր, թէկուզ այն աշխարհից, միայն թէ  
տուր: Բայց բանը նրանումն է, բարեկամ, որ թէն  
գանձարանն աշխատում է աղաներից էլ հարկ վերցնել,

սակայն նրանցից այնքան էլ օգուտ չունի: Այդ բանը կարելի է հէնց այս ըստէիս թւերով ցոյց տալ, որովհետեւ հարկերը սահմանի վրա հաշով են վերցնում, գրում են գրքերում և ամեն բան յախանի է:

—Այսպիսով գանձարանը արտասահմանեան ապրանքի համար մաքսային հարկ է վերցնում 92 միլիօն։ Այս միլիօնների ամենախոշոր մասը վերցնուում է այնպիսի ապրանքներից, որ անհրաժեշտ են դիւղացուն գրա համար էր վերջինս է վճարում։ Արտասահմանից մեծ մասմբ ըերւում են մեքենաներ, որոնցով խեղճ ժողովրդի համար շապկի ու հագուստի շթեր են գործում, ըելսներ, մանվաղներ, գերանդիներ, կացիններ և զանազան գործիքներ, ներկեր. մի խօսքով այնպիսի ապրանքներ, որ դիւղացին կամ անմիջապէս ինքն է գնում կամ թէ չէ ուրիշ միջոցաւ իր գրանից է վճարում։ Եթէ հաշւենք, թէ որքան է գանձարանը ստանում աղայական ապրանքներից, օրինակի համար, քաղցր գինիներից, ֆրանսիական մրգերից, սուրճից, թանկագին կտորներից, մախուրից ու մետաքսից, եթէ այս բոլորը հաշւենք, կտեսնենք որ գիւղացու վճարածի հետ համեմատած մի չնչին բան է։ Իսկ ազնւականներն ու վաճառականները մի զլուխ բղաւում են, թէ իրանց գործածած արտասահմանեան ապրանքների մաքսը շատ բարձր է։

ՀԵՅ, դուք, պարոններ—հարուսաններ։ Այստեղ էլ, զիւղացիների հետ համեմատած, դէպի ձեզ աւելի զիջող են։ Օրինակի համար վերցնենք թէյը։ Կան լաւ և վատ տեսակները։ Ամենահասարակ թէյը առանց մաքսի արժէ ֆունտը 40 կոպէկ, իսկ մաքսով երեք անգամ թանկ—մի՛ բուլքի 20 կոպէկ։

Այժմ վերցնենք թանկ թէյլ, աղաների թէյլ, 4  
բուբլու 20 կոպէկանոցը, կարծում ես մաքսով այդ

թէյը նոյնալէս 2—3 անգամ կըթանկացնեն: Խոչվէս չէ՞ Նոյնիսկ նրա արժէքի մի հինգերորդ մասը վրա չեն գալիս: Նոյն բանը և ծխախոտի վերաբերմամբ: Մախորկու և հասարակ տեսակների ակցիզը կազմում է գրանց գնի մի երրորդ մասը, իսկ աղաների երեք ըուբլիանոց ծխախոտի ակցիզը միայն իր գնի չորրորդ մասն է կազմում: Իսկ հինգ ըուբլիանոց ծխախոտինը, որ միայն հարուստներն են ռայում, հինգերորդ մասն էլ չի կազմում:

— Հէյ, բարեկամ, բարեկամ, ասում է Ստեփանը:  
Թողնենք այն, որ նրանք էլ գանձարանին վճարում են.  
դու այժմ այն հարցըու, թէ նրանք ինչ են շինում:  
երբեիցէ մի որևէ է ազնւական մի դեսեատին հող վարել-  
ցանել է: Զէ՞ որ այդ բոլորը մեր գիւղացու բազուկնե-  
րն են արել: Մենք շինել ենք աներ, պալատներ, սկե-  
զմբէթ եկեղեցիներ, մենք նրա շտեմարանը լցըել ենք  
հացով. մեզանից նուե հարկ են վերցնում, որով բոլոր  
ձրիակերներն ապրում են: Մենք—ամեն ինչ ենք: Մե-  
զանով է ամեն բան կատարում: Մենք բոլորին խմեց-  
նում, ուտեցնում և հազդնում ենք: Բոլորը մեր աշխա-  
տանքով են ապրում, մեր քրտինքն ու արիւնն են խմում,  
և դրա փոխարէն դեռ ծեծում էլ են...

Իսկ ի՞նչ են շինում աղամերն ու վաճառականները։  
Իրանց քէֆին ման են գալիս և բղաւում են զիւղացու-  
վրա, որ գործից յետ չմնայ։ Մեծ բան է, որ աղամերն  
ու վաճառականները ունեցած տեղից գանձարանին մի-  
բան էլ վճարում են։ Դեռ այդէլ քիչ է։ Ճիշտ եմ ա-  
սում, չէ որ նրանք ի՞նչ էլ որ վճարում են, բոլորը վեր-  
ցնում են զիւղացուց, նրան են թալանում...»

Լուեց Ստեփանիը. իսկ նրա խօսքերը իմ սիրաը մինչ-  
չ խորքը ճմլեցին. Ես մտածում էի. այդ լնչպէս է,  
որ մեր գիւղացուն բոլորը պղոկում են, ծեծում են,  
ծաղրում են, չարչարում են, իսկ նա—մեր հերոսը միշտ  
լուռմ է ու լուռմ...

Երկար ժամանակ սենք սուս էինք արել և տխուը  
մտքեր էին անցնում մեր գլխով...

—Այժմ հասկանում եմ, —ընդհատեցի Ես, թէ ինչ-  
պէս աղաներն ու հարուստները մեզ —միամիտներիս  
խաբում են... Հայ, թէ բանն ինչումն է... Ճիշտ խո-  
րամանկ կարգեր են:

— ՀԵՅ, երիտասարդ, ասում է Ստեփանը, ինչ կարգեր, ինչ բան: Այստեղ ոչ մի կարգ էլ հարկաւոր չէ — օրցերեկւայ թալան: Միթէ աղաներն ու չինովսիկները պէտք է ամաչեն որ թալանում են գիւղացուն: Այդ էր պակաս. նրանց, խիղճը, բարեկամ, մեռած է... առանց այլեւայութեան և վերջնում են և թակում...

Տուր, — վերջապաւ զնագ.

Սա աւագակութիւն—թալան չէ, բաս ի՞նչ է: Գալիս է վիճակային պրիստաւը կամ—իսպրավնիկը, իսկ նրանց յետևից սայլով ճիպոտներ—ըոզգիներ. ճարկի ապառիկը տւեքը —բղաւում է...

—Փող չկալ, աղա, մի քիչ համբերէ:

Եւ սկսում են ծեծել պիւղացուն:

Հիմա ասացէք ինզրեմ, սա ինչի՞ է նման։ Եթէ այս ձեւով մի մարդասպան էլ գայ գիւղը և կարողանայ բռնորին ծեծել, նրան էլ ամեն բան կտային... Առ, վերցրու, միայն թէ հեռացիր, իսէր Քրիստոսի։ Ամեն բան պէտք է տաս, իսկ ինքզ ինչչէս ուզում ես արա, թէ կուզ կրծիր այն ճիպոտների կեղեղը, որոնցով քեզ երեկ ծեծում էին։ Երբեմն միադ է գալիս, չարու-

թեամբ լցւում ես, կամ արտասուքդ է գնում... Անիծւածներ... Փորձիր—մի տար. վերջին կոպէկդ—խակոյն տաւարդ կծախեն:

Իսկ զիւղի տղրուկները—վաշխառուները վաղուց արդէն սպասում են և աչքները չորս արած նայում, թէ որ բանը կարելի է չնչին գնով առնել... Երբեմն էլ, այդ արնախումները խօսքերը մէկ են անում սլրիստաւի կամ խսպրաւնիկի հետ, որ այդ գառն վիճակում խեղճերին սեղմեն, և յետոյ օգուար կիսեն:

Այ, թէ բանն ինչումն է: Ասենք թէ անասունդ ծախեցին, բայց ինչով գարունը հողը մշակես... Մի խօսքով գալիս է ու աւազակի նման աւ երում: Այժմ ասա, ինչո՞ւ համար, ո՞ր մեղքերի համար: Օրինակի համար մեզանից յետ գնման և հողային հարկ են վերցնում: Մեզ ազատութիւն տւին, իսկ հողը հրամայեցին կալւածատէրերն իրանք են հողը շինել: Ի՞նչ աշխատանք են նրանք գործադրել հողի վրա, որ մեզանից փող են վերցնում այդ հողի համար: Հողը հին ժամանակներից զիւղացուն էր պատկանում: Իսկ կալւածատէրերին ոռուաց առաջին թագաւորները հողերը բաժանում էին միայն կերպու համար: Այդ ժամանակներում ամբողջ զինորական գործը տանում էին իրանք-կալւածատէրերը և զինորագրութիւն բոլորովին չկար: Քանի կալւածատէրը ծառայում էր զօրքի մէջ, օգտում էր հողից, իսկ երբ դուրս էր գալիս, նրա հողային բաժինը տըրում էր ուրիշ զինորականի:

Այդպիսով կամաց կամաց կալւածատէր—զինորականները զօրեղ իշխանութիւն ձեռք բերին ազատ զիւղացիների վրա և թագաւորական ուկազների միջոցաւ նրանց գարձրին իրանց լիակատար ձորտերը: Իսկ երբ

Ալէքսանդր Ա կայսրը, յաճախ կրկնառութիւններից զրդւած, ազատեց զիւղացիութիւնը ճորտութիւնից, ամբողջ հողը հաշւեցին կալւածատէրերի սեփականութիւն և ստիպեցին զիւղացիներին այդ հողերը նորից յետ գնել:

Մենք այդ հողերը մեր քրտինքով ողողեցինք, դարերից ի վեր նրա վրա աշխատեցինք, նրան գուրգուրեցինք, իսկ այժմ արի ու նորից յետ գնիր:

Կալւածատէրերն իրանք ոչ մի յետ գնման հարկ չեն ուզում ճանաչել, իսկ մենք պէտք է վճարենք: Վերջապէս մենք քանի տարի է վճարում ենք, վճարում և զեռ էլի չենք ազատում: Եթէ հաշւենք, մենք երեք անգամ աւել ենք վճարել, բան թէ հոգն արժէ, իսկ մեզանից վերցնում են, հա վերցնում, որովհետեւ մեր զիւղացին հաշիւների մէջ թոյլ է և խաղաղ բնաւորութիւն ունի—ինչ որ պահանջեն—կվճարէ: Սակայն ի՞նչ երկարացնեմ այդ մասին. դու ինքդ շատ լաւ գիտես, թէ ինչքան հարկեր կան:

Հարկ կայ ասելու, թէ բանի ըուբլի ես զու վճարում: Դու ինքդ երեկի աւելի լաւ կիմանաս: Քո մարմնիցդ են հանում այդ ըուբլիները, արիւնոտ զծերով են զրում այդ թւերը քո զիւղացիական կաշւի վրա... Հեշտ է մոռտնալ: Հէյ, դուք աղաներ, հարուստներ և... Զեր աշքերը ազան են և նախանձոտ... Ամեն բան դուք ձեզ համար էք ձանկել՝ և հողը, և ջուրը, և մեր խրձիթը, նոյն իսկ կարմիր արեւը: Ամեն բանի համար դուք հրամայում էք վճարել...

— Այո, Ստեփան, այն, ծանը է այդ հարկը... բայց զանձարանն այդ ձեռվ շատ փող է ստանում:

— Մի քիչ... 86 միլիոն յետ գնման վճարների, ուրիշ զանձարան հարկեր—բացի անուղղակի հարկերից—

130 միլիոն. ահա թէ ինչքան. և այս բոլոր հարկերը կոչում են ուղղակի, որովհետեւ քեզանից պոկում են ոչ թէ անուղղակի, այլ ուղղակի կերպով, առանց նենդութիւնների ու խարդախութիւնների։ Տուր—և ուրիշ ոչինչ։

—Իսկապէս, ասացի ես խորհելով.—շատ անաւըութիւններ է պատճառում գիւղացուն այս ուղղակի թալանը, այսինքն ուղղակի հարկը...»

—Ել ի՞նչ ասել կուզէ, ասում է Ստեփանը, ոչ թէ շատ, այլ մենք բոլորս շուտով գատարկ տափին կնսուենք։ Ոչ մի ժամանակ և ոչ մի բան իրա ժամանակին չես կարողանում ծախել, այլ միշտ սախալւած ես չնչին գրնով վաճառել, միայն թէ ճիպուններից ազատւես։ Իսկ վաշխառուներն ու հաւաքագնողները բազէի նման նայում են, որ քեզ խփեն ու կտցեն։ Աշնանը չնչին գրնով կը ծախես, իսկ զարնանը միենոյն վաշխառուից եռավատիկ թանկ գնով յետ կդնես... Արի ու հիմա հարստացիր։

Ասուած մի արացէ, որ պարտք վերցնես—ամբողջ կեանքումդ էլ չես պրծնի, քեզանից երեք տակ կաշի կը պոկէ կալւածատէրը կամ վաշխառուն... Մէկ էլ տեսար կովդ ու եզդ ծախեցին...»

Իսկ հողը. քեզ լաւ յայտնի է, թէ ինչքան հողաբժին ես ստացել, նոյն իսկ նրա վրա, այդ կերակրողի վրա չես էլ ուղում նայել... Նա արդէն ուժասպառ է եղել—էլ չի բուցնում։ Ի՞նչով պարարտացնել և ի՞նչ ցանել. ահա և քեզ իսկական տնաքանդութիւն։

Թողնում է թշւառականը և հողը, և խրճիթը, և կնոջն իր երեխաներով, գնում է, ուր որ աչքը կարում է... Իսկ այսեղ նրա առաջնէ ցցւում «փողբադչին», և սատանալի նման կանխավճարով է գրաւում...»

Վերցնում է գիւղացին կանխավճարը, վճարում է

հարկերը և գնում է քաղաք՝ գործարանում աշխատելու։ Դրանից յետոյ թող աշխատի մինչև որ հոգին դուրս գայ։ Փողբադչին միշտ կանգնած է նրա գլխին և խլում է նըրա քրտինքի արդիւնքը։ Նա գեռ Աստծուն փառք պիտի տայ, եթէ կենդանի տուն վեռագառնայ։ Այս դէպքում էլ նա իր հետ միայն լու և ոչիլ կը բերէ. բանից դուրս է գալիս, որ այս ակնյայտնի թալանից միայն վաշխառուներն ու փողբադչիներն են օգտառմ, իսկ խեղճերը աւելի ու աւելի են աղքատանում...»

Այժմ տեսնենք, բարեկամ, թէ ուր են գնում մեր փողերը, ում զրպանն են սողում մեր արիւնոտ կոպէկները։

Ամեն տարի գանձարանը ցուցակ է կազմում, թէ ինչպէս և որտեղ է ծախսում փողերը։ Այս հաշիւը կոչում է պետական եկամտացոյց և միշտ էլ լրագրներում տպւում է։ Այս հաշւից պարզ կարելի է տեսնել այն ամենը, ինչ որ քեզ այժմ պիտի պատմեմ։ Դէհ, լաւ լսիր. նախ և առաջ . . . . . իր ընաանիքի հետ միամին 12 միլիոն 800 հազար բուբլի է վերցնում իւրաքանչիւր տարի։ Երեսակայում ես թէ ի՞նչ ուոճիկ է։ Համարեա 35 հազար բուբլի է գալիս օրական։ Այդ եկամտապավ կարելի է կէս նահանգ մի ամբողջ տարի կերակրել։

Այս տարի մեզանում 33 նահանգներում երաշտ էր, 40 միլիոն գիւղացիներ սոված էին և գանձարաննը նրանց կէս տարւայ համար 22 միլիոն փող տւեց, իսկ . . . . կէս տարւայ համար 6 միլիոն է ստանում ապրուստի համար։ Ի՞նչ ասել կուզէ չաղ պատառ է։ Իսկ ի՞նչով են մեզ գրա փոխարէն վարձատրում։ Ի՞նչ են շնում այդ փողերով։ Ահա թէ ի՞նչ. գւարճանում են որսորդութեամբ, տօներ ու տօնախմբութիւններ սարքում, ու-

տում-խմում են, քէֆ են անում և մարմարեայ պալատ-ներում են ապրում: Այժմ ժողովրդի աշքին շատ-չեն երեսմ: Ուրիշ կերպ չի էլ կարող լինել...

Հիմա հարցնենք, թէ մեզ ի՞նչ են տալիս մեր այդ արիւն-քրտինքով ձեռք բերած 12 միլիոնների փոխարէն: Մեր վզին զանազան իշխանաւորներ, կալւածատէրեր, խալլաւանիկներ, պրիստաւներ, վերակացուներ են նըս-տեցրել. նրանք մեզ ճնշում են, չեն թողնում ազատ շունչ քաշենք. նրանց իրաւունք է արւած մեզ—ինչդ գիւղացիներիս զիսին իմաստութիւններ անել՝ ինչքան որ իրանց-քէֆն է ուզում: Այժմեան կալւածատէրերը նախկիններից էլ շատ են մեզ ճնշում, նրանց համար գոյութիւն չունի ոչ արդարութիւն և ոչ էլ դատաստան: Իսկ սակաւահողութիւնը, քաղցը և ցուրտը մեզ ճնշում, կուացնում են և քշում տանում պորտաբոյծ վաշխառուի կամ հարեան կալւածատիրոջ մօտ ճորտութեան:

Գիւղացին փորձում է իր գիւղի այդ գերութիւնից փախչել քաղաք և աշխատել գործարաններում, սակայն այնտեղ էլ հեշտ չէ:

Թէկուզ այնտեղ էլ արիւն-քրտինք թափելով աշ-խատես, դարձեալ շնորհակալ այտի լինիս, որ քաղցա-ծութիւնից չես մեռնում: Գիւղացիներից շատերն էլ «հայր» թագաւորի վրա են յոյները դնում. մի գուցէ նա յիշէ իրանց: Նրանց մաքովն անցնում է, թէ ազնւականներն ու կալւածատէրերն են իրանց թշւա-ռութեան պատճառը, եթէ այդ մասին թագաւորը լոէ իրանց կօգնէ: Սպասում են, սպասում, բայց թեթե-ռութիւն չի լինում:

Սակայն ինչո՞ւ են սպասում: Միթէ ի՞նքը . . . . . էլ մի կալւածատէր չէ: Զէ որ ճորտութեան ժամանակ ինքն էլ գիւղացիներ ուներ, որոնք այժմ

ուզենի են կոչւում: Երկի կարծում էք, թէ ճորտու-թիւնը վերացնելու ժամանակ նա իր գիւղացիներին խական ազատութիւն տևեց. ի՞նչպէս չէ. նա էլ նոյն ազատութիւնը տևեց նրանց, ինչ որ մնացած կալւածա-տէրերը, որովհեան ինքն էլ նոյն տեսակ կալւածատէր է, միայն թէ աւելի խոշոր տեսակից: Նա էլ միւս գոր-ծարաննատէրերի նման ունի իր սեփական գործարան-ները. գուցէ այդտեղի բանւորները աւելի ազատ են, լաւ վիճակի մէջ են: Ի՞նչպէս չէ. ապա զնա հարցրու... Ուրեմն էլ ինչ են սպասում . . . . . ից, ամենա-առաջնակարգ կալւածատիրոջից և ամենահարուստ գոր-ծարաննատիրոջից:

Մեզ պէս յիմարներին այդպէս էլ հարկաւոր է: Մենք ոչ ոքի վրա չպիտի յոյս դնենք—ինքդ քեզ վրա յոյս գիր:

—Ի՞նչ ես ասում, Ստեփան,—ասում եմ ես, —մի-թէ . . . . . էլ գործարաննատէր է: Միթէ նա կա-րող է իրան մի այդպիսի գործով կեղաստել:

Սակայն Ստեփանը այնպէս էր ոգեսրւել, որ ինձ չթողեց շարունակելու. խօսում էր, ևս խօսում:

—Օ՛հ, օհ, օհ, և ի՞նչ տեսակ: Ապա զնա տես նրա ապակու, յախճապակու գործարամները և ամենահա-րուստ ոսկու հանքերը: Դու այնտեղ կտեմնես, թէ ինչ-պէս են փող գիզում մեր եղբայր—բանւորի քրտինքով:

Նրանք ստրկացրել են մեր որդիներին ու թոռնե-րին: Իրանց ձեռնարկութիւններով նրանք պետական պարտքը անսպառ գարձրին: Այժմ այդ պետական պարտ-քի համար միայն 286 միլիոն տոկոս են վճարում տա-րեկան: Լաւ է, չէ: Կառավարութիւնը այդ ամբողջ պարտքը մեր վզին է սեղմել՝ մերթ պատերազմական, մերթ նոր երկաթուղիներ շինելու անւան տակ: Օրինա-

կի համար, որպէսզի մեր վաճառականներին ու գործարանատէրերին հեշտ լինի Զինաստանի հետ առուտուր անելը և Մանջուրիայում փող դիզելը, բաւական թւով զինուրներ այնտեղ կուլ տվին. ամբողջ Սիբիրի միջով երկաթուղի անցկացրին. և այդ բոլորը մեր գիւղացւ փողերով:

Իսկ գիտես թէ այս ձեռնարկութիւնների պատճառով ինչքան պարտք է չոքած մեր վզին: Առսկալի է ասել. վեց ու կէս հազար միլիօն (6,500 միլիօն) բուբնի: Նորի իսկ գրագէտ մարդու համար գժւար է գրել, իսկ երեսակայել աւելի գժւար է—այնքան որ շատ է:

Բարեկամ, եթէ գանձարանը ամեն տարի ամբողջ Ռուսաստանից հաւաքածը տայ, երեք տարւայ ընթացքում չի պըծնի այդ պարտքից: Գանձարանը եթէ ուզենար այդ պարտքը միանգամից վճարել, այն ժամանակ ամեն մի ընակիչ, բացի միւս հարկերից ու տուրքերից, 50 բուբնի պիտի տար, իսկ 6 հոգուց բաղկացած ընտանիքը—300 բուբնի:

Այսպիսով մենք մեր ամբողջ կեանքում պարտապան էլ կմնանք և ամեն տարի էլ իւրաքանչիւր ընտանիք 8 բուբնուց ոչ պակաս պիտի տայ, որ կարողանան միայն տօկոսները վճարել: Սա արդէն, բարեկամ, իսկական անգունդ է: Զինովիկների պատի ու անւան և վաճառականների օգտի համար՝ թէ մենք, թէ մեր զաւակները, թէ մեր թուները և թէ մեր ծուները պէտք է վճարենք, հա վճարենք:

— Խաթայ է, էլի,—ասում եմ ես: Միթէ այդքան շատ է, բայց աչքի չափով ինչքան փող դուրս կդայ:

— Ինչքան: Դէհ հիմա լսիր: Օքինակի համար, ամենք թէ այդ ամբողջ պարտքը արծաթէ բուբներով է: Թող այժմ այդ 6,500 միլիօն պարտքը այդպիսի բուբ-

լիներով հաւաքեն: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ քաշ կունենայ այդ ամբողջ գրամագլուխը: Իմ օրացոյցի մէջ գըրած է, որ 1000 արծաթէ բուբնին համարեա 1 փութ 11 փունտ կքաշէ: Ես էլ հաշւեցի թէ ինչքան կքաշեն այդ փողերը և մի այնպիսի քաշ ստացայ, որ մտածելն անգամ սոսկալի է՝ 8,300,000 փութ: Եթէ այս փողերը վագոնների մէջ գարսելու լինին, ամեն մէկի մէջ 750 փութ տեղաւորեցնելով, 11,067 վագոն հարկաւոր կինքին: Եւ եթէ այս վագոնները գծի վրա յետեկց շարեն, 100 վերստից երկար մի շղթայ դուրս կդայ:

Այժմ գոնէ մի քիչ գաղափար կազմեցի՞ր, թէ ինչքան է մեր պետական պարտքը:

— Տէր իմ, Աստւած իմ: Երազում էլ չէի կարող երեակայել, ասում եմ ես: — Սակայն ում են այդ 286 միլիօն տօկոսները վճարում: Միթէ կարող են այնպիսի հարուստներ գոյութիւն ունենալ, որ կարողացել են այդքան փող պարտք տալ:

— Շատ միամիտն ես եղել, եղբայր, ինչպէս տեսնում եմ, ասում է նա: — Իհարկէ աշխարհում այդպիսի հարուստ չկայ: Ահա թէ ինչպէս է այդ լինում: Գանձարանը թղթեր է շինում, սակայն այն տեսակներից չէ, որ փողի տեղ է գնում, այլ յատուկ տեսակների, որոնց վրա գրւած է «գանձարանի փոխարինութիւնը» և այդ թղթի արժեքը, ենթադրենք, 100 բուբնի է նշանակած, թէպէտ նա գանձարանին մի գրօշ էլ չի նստում: Ով որ այս թուղթը փողով գոնէ, գանձարանը տարեկան 4 բուբնի տօկոս կտայ: Այդ թղթերն առնում են վաճառականները, ազնւականները, հարուստները և սրանք առանց գործ շինելու գանձարանից տօկոսներ են ստանում: Այսպիսով մենք բոլոր հարուստներին տօկոսներով կե-

բակրում ենք և ոչ միայն մեր հարուստներին, այլ և արտասահմանի:

— Շնորհակալութիւն, Ստեփան, ասում եմ ես,— այժմ հասկացայ: Ահա թէ բանն ինչումն է: Սակայն առաջ ինձ, ճիշտ է, որ գանձարանը մեծ փողեր է ծախսում գորքի վրա:

— Այո, եկամուտի մի քառորդ մասը: 420 միլիօն — ահա թէ ինչքան: Այդ միայն սովորական ծախսերը: Իսկ եազօնական պատերազմի ժամանակ էլի մօտ 2000 միլիօն ծախսեցին: Հէյ, զինւորներ, զինւորներ, զիւղացու հացն էք ուստում և ինչով էք վարձատրում դրա փոխարէն:

Հէյ դու գանձարան, գանձարան, բաւական չէ՝ որ զիւղացուց հարկ ես վերցնում, դեռ մի աւելի դառն հարկ ես ստեղծել — զինւորագրութիւնը: Այդ հարկն արդէն փողով չեն վերցնում, ոչ, դա արդէն արիւնով ու մսով են հաւաքում զիւղացիներից: Այստեղ արդէն փող հարկաւոր չէ, առևլը նրան քո որդիներն ու եղբայրները: Ինչքան արցունքներ են թափւում այդ պատճառով ամբողջ Ռուսաստանում: Միայն կուսական ծածուկ և մայրական դառն արցունքների մէջ կարելի կլինէր բոլոր իշխաններին... հետ միասին լողացնել: Իսկ այդ հայրական դառն արցունքները, որ թափւում են ծերունիների աչքերից... Հէյ վախ: Իմ եղբայրն էլ զինւոր է: Առաջ բաւական լաւ տղայ էր, իսկ այժմ՝ Աստւած ազատէ: Նրանց փչացնում են զօրավարները: Փակում են զինւորանոցներում, որ զիւղացուց հեռու լինեն և սրտերը քարացնեն, այդ պատճառով էլ հէնց որ դուքս են դալիս այդ վանդակներից, առանց աչք թերթելու կարող են իրանց հօրն ու մօր զլուխը թացնել: Ես, ասում է, թագաւորի ծառան եմ և պատրաստ եմ նրա համար

կեանքս զոհել, իսկ դու, զիւղացի, յիմար ես, այ թէ լինչ:

Այս, դու վայրի զազնն: Մոռացել ես, ի՞նչ է, թէ ով է քեզ խմացնում և ուտացնում, ձրիակեր: Ո՞վ է քո հայրը, մայրը և եղբայրը: Ծանր է, եղբայր, երբ մտածում ես, թէ ինչպէս է իշխանութիւնը կարողանում հարազատին այնպէս փչացնել, որ մարդակերալութիւն էլ չի մնում մէջը, որ նա պատրաստ է իր կերակրող զիւղացուն, իր հօրը, իր մօրը մորթել առանց ձեռքը դողացնելու: Այս, եղբայր, ծանր է, երբ տեսնում ես, որ մենք ինքներս այսկերպ մեզ մորթում, թալանում, ծեծում ենք և այդ բոլորը նրա համար, որ մեր թշնամիներին տանք և մեր փողերը և մեր զաւակները... Այս, սպասիր, կդայ ժամանակը, մենք էլ խելքի կգանք...

— Ստեփանը լսեց, բայց էլի չնամբերեց:

— Ո՞ւր են զնում զանձարանի մնացած փողերը, հարցնում ես դու: Այստեղ արդէն . . . ից ու զինւորներից յետոյ զանազան մանր մունր ազւաւներ են դալիս այս թալանած որսը կացելու: Միւս կողմից մօտ երեք միլիօն զանազան ուրիշ «նշանաւոր» թռչուններն են խլիլում — բոլորը սպիտակած սենատօրներ, մինիստրներ, «պատելիներ» և «նշանաւոր» գեներալներ: Յետոյ՝ 5 միլիօնը մեր արտասահմանեան հիւպատունները քէֆերի ու խրախճանքների համար են վերցնում. 93 միլիօնը ուօմիկ է տրւում նահանգապետներին, գաւառապետներին, պրիվատաւներին և այլն: Մեր դատարանները 47 միլիօն են նստում մեզ վրա, որտեղից սակայն զիւղացին ոչ մի ճշմարտութիւն չի կարող կորզել: 36 միլիօնը ծախսում է զանազան զարոցների վրա, ամենից շատ՝ զիմազիաների, կորպուսների ու համալսարանների վրա. Արանք այն զպրոցներն են, որտեղ միայն աղաների ու

վաճառականների զաւակներն են սովորում: 170 միլիոնը գնում է երկաթուղիների վրա, որից միայն «փողը բաղչիներն» ու տէրերն են գրպանները հաստացնում: Դեռ էլի ինչքան են վճարում, որպէս կենսաթոշակ, պառաւ գեներալներին, պառաւ պատւելիներին, ձրիակերներին և թագաւորի աման լիզողներին:

Ասում են թագաւորի համար ծառայելը իզուք չի կորչում: միայն հայրենիքի և ժողովրդի համար ծառայելն է անօգուտ: Մէկ էլ տեսար՝ շքանշան ստացար: Այս, այդպէս: Ուրեմն տեսնում ես ինչպէս են աղահարուստներն ու կառավարութիւնը մեր փողերով դործ տեսնում: Թէ իրանց զաւակներին են ուսում տալիս, թէ ուտում են, թէ խմում, թէ ծեր անկեախներին—թագաւորական ծառաներին են պահպանում, թէ նահանգապետներին ու գաւառապետներին են կերակրում, թէ նաւեր ու երկաթուղիներ են շինում, թէ ամեն բան. իրանց բաւականութեան համար ինչ ուզում են անում են:

Մի խօսքով մեր փողերի հետ այնպէս են վարւում, որ կարծես թէ իրանց սեփականը լինի:

— Այն, կարծես թէ իրանցը լինի, ասում եմ ես.— ասա, ապա ի՞նչ է այս բոլորից գիւղացու ձեռքն ընկնում:

— Գիւղացու: Ի՞նչպէս նա կհամարձակւի իր դունը «ընտրեախների» շարքը խոթել: Նրա գործը միայն վճարելն է. միթէ նրա խելքի բանն է ազաների մէջ մտնելը, ուր իր փողերի զիմին քէֆ են անում: Դեռ մի բանով էլ դու պիտի չնորհակալ լինես, որ չինովիկները, ազնւականներն ու տէրտէրները բարեհաճում են քո փողերը վերցնել և նրանով կուշտ ուտել ու խմել:

— Գուցէ այդ ճոխ սեղանից մի փշտոնք էլ մեզ մնայ, աւելացը ես իմ կողմից:

— Մի փշտոնք, հեգնեց Ստեփանը. այս, միայն այն փշտանքը, որ այս տարի 20 միլիոն շպրտեցին քաղցած գիւղացիներին: Դպրոցների համար նշանակած փողերից էլ մի չնչին բան գցում են ժողովրդական և գիւղական դպրոցների համար: Շատ չէ, մի վախենայ, չես կշտանայ: . . . ին 12 միլիոնից աւել, զինւորներին ու նաւաստիներին 420 միլիոն, իսկ բոլոր ուսումնարաններին 36 միլիոն: Դպրոցների համար նշանակած փողի մեծ մասն էլ գնում է այնպիսի դպրոցների վրա, որ մեր գիւղացին երբէք չի տեսնում, ինչպէս որ չի տեսնում իր ականջները: Ուզնում ես իմանալ թէ ինչքան փող է ծախսում թագաւորական գանձարանից գիւղական ուսումնարանների վրա: Ընդամենը 3 միլիոն ըուբի: 3 միլիոն ըուբի 100 միլիոն գիւղացիների համար: Տարին ամեն մէկին հազիւհազ 3 կոպէկ է գալիս. «ընդունեցէք, խղճուկ գիւղացիներ, իսկը Քրիստոսի, երեքական կոպէկը—ասում է գանձարանը, այդ էլ բաւական է ձեզ, թէ չէ երես կառնէք»:

Խելք ու շնորհք սովորել տարեկան 3 կոպէկով— եփած հաւա էլ կծիծաղէ այս բանի վրա: Ահա այսպիսի օյին է խաղում մեր զիմին մեր «սպիտակ հարազատը»...

Սակայն թագաւորական ու ազնւական տեսակէտից այդպէս էլ հարկաւոր է. թէ չէ մէկ էլ տեսար գիւղացին էլ բան սովորեց և ուզեցաւ իր խելքով ապրել, մէկ էլ, ով գիտէ, Աստած մի արացէ, արգարութեան մասին էլ մտածեց: Նրան,—այդ անշնորհքին, եղբայր, հարկաւոր է չարքաշութեան և հնազանդութեան մէջ պահել, թէ չէ չարքաբաստիկ ըուպէ է... Հա, հա, հա, մէկ էլ տեսար ցնցւեց...

Մենք լոեցինք:

—Այդպէս, եղբայր, այդպէս, — ասաց Ստեփանը միտք անելով: — Աշխատում ես, աշխատում, ձեռներիդ կոշտերը իրա օրում չեն անցնում, ամբողջ կեանքումդ մի ուրախութիւն չես տեսնում: Կաշիդ են քերթում. Ռուսաստանում էլ ճիպոտ չմնաց: Արտաստում ես կարիքի մէջ խրւած, գիշերը չես քնում, կուշտ փորով հաց էլ չես ուտում, չարչարում ես անվերջ և այս բոլորը ինչի՞ համար:

Այդ փողերով աղաներն ու չինովսիկներն են աղրում, ուտում են ու մսն գալիս. վաճառականներն ու վաշխառուներն են. շահում. դօրքին, ոստիկանութեանն ու ժանդարմաններին են պահում, որպէսզի մեզ, մեր աղ ու հացի փոխարէն, մեր իսկ ձեռքով ծեծեն և մեր արիւնն ու քրտինքը խմեն... Ա՛խ, շատ դառն է դիւդացու կեանքը: Միթէ ոչ մի անգամ նա չպիտի քողցրանայ: Ահա այդ տեսակ դրութիւն է, եղբայր, շատ դառն է: Է՛հ, գնանք:

Վեր կացանք, վերցրինք զլիսարկներս ու դուրս եկանք: Արտերիս վրա կարծես մի բան էր ծանրացել: Մոռայլ ու տիսուր մտքեր էին պատյտ գալիս մեր վլուխներում:

—Ինչու տիսրեցիր, սիրելիս, ձայն տւեց Ստեփանը. —Երկի շատ դառն է, այս, եղբայր... Է՛հ բայց ըսպասիր, ժողովուրդը կզարթնի: Նա իր ուսերից դէն կը շպրտէ այդ արբեցող-աղաներին ու վաշխառուներին և կապրի ուրախ-զւարթ: Միայն լաւ իմացած եղիր, Անդրէաս, որ այն ժամանակ հարուստ չպիտի լինի, որովհետեւ ամեն տեղ ամեն ժամանակ այդպէս է եղիլ եւ այդպէս էլ կլինի ով որ հարուստ է եւ նօր նա հարկերի վերաբերմամբ արտօնեալ կլինի եւ ամբողջ այդ

ծանրութիւնը աղբաների վզին կդնէ: Այս բանը լաւ միտք պահիր և ականջիկ՝ ող արա:

II

Շատ միտք արեցի Ստեփանի ասածների մասին: Որ աշխատաւոր ժողովուրդը վատ է ապրում, այդ ես առաջ էլ գիտէի: Իսկ այժմ հասկացայ, թէ ինչու է վատ ապրում: Հարուստներն ու չինովսիկները ամեն տեղ և ամեն բանի մէջ իրաւունք ունին և այնպիսի խորամանկ կարգեր են սարքել, որ մենք բոլորս, աննկատեմ կերպով, նրանց համար ենք աշխատում: մեր բոլոր աշխատանքը նրանց օգտին է գնում: Ինչքան խելքիս զօր տւի, բայց ոչ մի ճար չգտայ այս ցաւին վերջ դնելու համար:

Մի յարմար ժամանակ գտնելով, Ստեփանին խօսքի բոնեցի, թէ բանն այսպէս է, չեմ կարողանում մտածել, թէ ի՞նչպէս անենք, որ մեզ թալանող այդ խորամանկ կարգերից ազատենք:

—Գտնելն այնքան էլ զժուար չէ, եթէ իմանաս, թէ որտեղ է այս բոլոր չարիքների արմատը, — ասում է Ստեփանը: — Այժմ ամեն բան կարգագրում են հարուստները. նրանք թէ օրէնքներ են զրում և թէ ամեն բան կառավարում. իհարկ է ոչ ոք իրան թշնամի չէ, զրա համար էլ, բոլոր օրէնքները նրանց օգտին են ժառայում:

Դրա համար էլ. ուրեմն, պէտք է աշխատել, որ առանց ժողովրդի կամքի ոչ ոք իրաւունք չունենայ օրէնքներ հրատարակել, հարկեր ու տուրքեր նշանակել: Օրէնքները պէտք է բոլորի համար էլ հաւասար

լինին և ոչ թէ այսպէս, ինչպէս այժմ—տպնւականներին համար ամեն տեսակ արտօնութիւններ, իսկ մեզ համար ամեն տեսակ ճնշումներ: Իսկ այդ բանը կվերանայ միայն այն ժամանակ, երբ օրէնքները կզրեն ոչ թէ ինքնիշխան չինովնիկները, այլ ամբողջ ժողովրդի կողմից ընտրւածները:

Նրանք բոլորը կընտրեն իրանց պատգամաւորներին, կհաւաքւեն օրէնստու ժողովում և կվճռեն բոլոր կարեոր գործերը: Իսկ գիւղական, վիճակային և քաղաքային գործերը կվճռեն իրանք գիւղական ժողովներում: Բոլոր չինովնիկներն ու գտաւաւորներն էլ պէտք է ժողովրդի առաջ պատասխանատու լինեն:

Ենթադրենք մի որ և է գաւառապետի հաւանեցին, նրան նորից կընտրեն, չհաւանեցին—բարի ճանապարհ: Հենց միայն սրանով աշխատաւոր մարդը մի քիչ ազատ շունչ կքաշէ:

—Մեղք է ծորում շրթունքներիցդ,—ասում եմ ես,—իհարկ է մեծ տարբերութիւն կլինի, ուրիշ բան է, երբ չինովնիկը քո գլխին է իշխանաւոր և ուրիշ բան է երբ նա հասարակութեան համար վարձկանի, գործակատարի նման մի բան է: Միայն ես կարծում եմ, որ դա գործի միայն կէս մասն է: Ենթադրենք, թէ չինովնիկների ձեռքերն ու ոտները կապեցինք, ժողովրդական իշխանութեան տակ զցեցինք և հաշւետւութեան ենթարկեցինք, բայց վաշխառուները, կալւածատէրերը և վաճառականները դեռ մնում են և կարող են մեզ վրայ էլի ճնշում գործ դնել: Դու ինքդ ասացիր, որ ով հարուստ է և ուժեղ, նա հարկերի վերաբերմամբ արտօնութիւն կունենայ:

—Դրա մասին էլ, եղբայր, իելացի մարդիկ մտածել են: Նախ և առաջ, երբ ուրիշ օրէնքներ լինեն,

երբ ժողովուրդը ինքը իրան կառավարէ, վաշխառուներն ու աղաները այնքան էլ հեշտութեամբ չեն կարողանայ իշխանութիւնն իրանց ձեռքին պահել: Նրանց թոյլ չեն տայ այսպէս կամայականութիւն անել, ինչպէս այժմ—դատաստան կանեն:

Աշխատաւոր ժողովուրդը անհամեմատ թեթևութիւն կզգայ, հարկերը կըշանան և ժողովրդական փողերը այլ ևս ոչ չի համարձակւի յիմարաբար ծախսելու: Ճիշտ է քո ասածը. քանի որ գոյութիւն ունեն հարուստներ ու աղքատներ, քանի որ մի անհատ ստրկի նման աշխատաւմ է միւսի համար, իսկ միւսը անդործութիւն ու շույլութիւն է անում, իսկական հաւասարութիւն չի լինի մարդկանց մէջ, իսկական երջանկութիւն չի լինի երկրի վրա:

Որպէսզի բոլոր մարդիկ հաւասարապէս լաւապրեն, հարկաւոր է այնպիսի կարգեր հաստատել, որ հարուստ ու աղքատ չլինի և չկարողանան էլ երեան գալ:

Որտեղից է աղքատութիւնը և որտեղից է հարստութիւնը, այդ նրանից է, որ այժմ մի մարդը կարողանում է տէր գառնալ այն բաններին, առանց որի ամբողջ ժողովուրդը չի կարող ապրել: Օրինակի համար վերցնենք հողը: Առանց հողի գլուխը ո՞ր քարին տայ գիւղացին: Հողը պէտք է ընդհանուրի մայր-կերակրողը լինի, ընդհանուրի օգտին ծառայէ: Իսկ այժմ մի որևէ տասնեակ կալւածատէրեր իրանց սեփականութիւնն են հաշւում հողի մի այնպիսի բանակութիւն, որի վրա շատ հազարաւոր մարդիկ կարող էին ապրել: Այն ինչ անհող թշւառականների կողքին բազմաթիւ գիւղացիներ են տառապում, կամ Միքիր են գնումնոր տեղեր գրանելու, կամ թէ հէնց նոյն կալւածատէրերի մօտ մշակութեան—ստրկութեան են մտնում: Գիւղում գիւղա-

ցուն հողով են ձնշում, իսկ քաղաքում գործարանով։ Այնտեղ էլ մեր եղբայր-բանտորները դատարկ ման են գալիս, առողջ ձեռքեր ունին, աշխատելու ցանկութիւն էլ կայ. սակայն ներկայ ժամանակներում ինչ գործ էլ ուզում ես արա—դատարկ ձեռքերով ինչ պիտի աշխատես։

Այժմ ամեն տեղ տարածւած են մեքենաները, նըրանց միջոցաւ ամեն տեսակ ապրանքների արտադրութիւնը հեշտացել է. մեքենայի աշխատանքի դէմ ձեռքի աշխատանքը չի կարող դիմանալ։ Սիրելիս, թէպէտ մեքենան ինքնը աշխատինքեան լաւ բան է, միայն իսկոյն յիշում ես այս առակը թէ՝ «ուրիշի աշքը մեզ լոյս չի տայ», ինչպէս որ հողն են ձեռքերում հաւաքել, անվերջ սեփականութիւն դարձրել, այնպէս էլ գործարաններին, մեքենաներին ու երկաթուղիներին են տէր դարձել։ Այժմ հասկանում ես, թէ ինչ եմ ուզում ասել։ Երկրի բոլոր հարստութիւնները—բոլորը մարդկային աշխատանքով է ձեռք բերւած։ Իզուր չէ ասւած, թէ առանց աշխատանքի պտուղ չի լինում։ Ուրեմն հարկաւ որ է, որ մարդկային աշխատանքը մի որևէ է բանի վրա գործադրւի։ Նուի և առաջ հող է հարկաւոր, գործիքներ են հարկաւոր, մեքենաներ, զանազան յարմարութիւններ են հարկաւոր, իսկ երկրորդը—քանի առաջ գնանք, այնքան մեծանում են այդ պահանջները։

Այժմ փորձիր ամեն բան թողնել այնպէս, ինչպէս որ կամ։ Հողերը, գործարանները—մի խօսքով այն ամենը, առանց որոնց մարդկային աշխատանքը անարդիւնք է—այն ժամանակ ամեն մէկը կարող է իր մըշտական սեփականութիւնը դարձնել։ ինչ գուրս կգայ։ Այն—որ ով որ աւելի ճարպիկ է և ժիր ամեն տեսակ արդար ու անարդար միջոցներով իր ձեռքը կհաւաքէ

մեքենաներ, հողեր և կսկսէ սրանց օգնութեամբ ուրիշներին սարկացնել։ Ինքն այլևս աշխատելու կարիք չունի. ինչ հարկաւոր է։ Նրա փողն արդէն փող է ծնում։ Նա իր հողին ու գրամագլխին անհող ու տնաւէր գիւղացիներին է մօտեցնում—ով է մեղքից ու դարդից ազատ—ահա այսպիսով ուրիշի բրտինքով՝ իր քէֆին ապրում է հզօրութիւնը։ Ահա այս է աղայական չար կամայականութեան գլխաւոր արմատը—պատճառը։

Հողերը, գործարանները, մեքենաները—մի խօսքով այն ամենը, առանց որոնց չի կարելի տքնել, չի կարելի աշխատել՝ անարդարութիւն է տալ առանձին մարդկանց ձեռքը։ Այդպիսով լիազօր իրաւունք է տրում զրանց՝ ուրիշի ձեռքերով կրակից շագանակ հանել։ Իսկ եթէ մենք ուզում ենք խղճմատանքով, արդարութեամբ ու ճշմարտութեամբ գործ տեսնել, այն ժամանակ անհրաժեշտ է, որ այս բոլորը ընդհանուրինը լինի։ Հողը պէտք է ոչ քոնը լինի, ոչ էլ իմը, այլ ընդհանուր համաձայնութեամբ, արդարութեամբ և հաւասարութեամբ պէտք է բոլորը նրանից օգտւեն։ Գործարանները պէտք է տիրովի չինեն, այլ հէնց իրենցը—բանւորներինը։ Մեծ հիմնարկութիւնները, երկաթուղիները, հանքերը, նաւերը—այս բոլորը պէտք է ժողովրդին պատկանի և բոլոր գործերը պէտք է կառավարեն ամբողջ ժողովրդի կողմից ընտրւած առանձին ներկայացուցիչների ձեռքով։

Այժմ մեր աշխատանքից օգուտ—շահ են ստանում այդ վաճառականները, երկաթուղու տէրերը, գործարանատէրերը, կալւածատէրերը։ Իսկ ինչ է օգուալը—շահը։

Դա մեր արիւնն ու բրտինքն է։ Ոչնչացնենք այդ մասնաւոր սեփականութիւնը, հողատիրութիւնը և նըրաւեղը գնենք ընդհանուր սեփականութիւն—այն ժամա-

նակ կամհետանայ շահը և կմնայ միայն ընդհանուր աշխատանքը՝ ընդհանուրի օգտին...

Սյսպէս էր ասում Ստեփանը. նա ամբողջովին կարմրել էր, ուզում էր պարզ կերպով բացատրել ինձ այդ ամենը: Իսկ ես լուսմ էի և աշխատում մի խօսք անդամ բաց չթողնել. տեսնում եմ, որ այստեղ է թաղնած ամբողջ ճշմարտութիւնն ու արդարութիւնը... և ինձ թւում է, թէ մինչև այժմ մի ու քող էր քաշած աչքերիս և այժմ այդ քողը Ստեփանը բարձրացնում է...

— Սպասիր, ասում եմ,— մի քիչ սպասիր... թող մի քիչ գլուխս մտնի, թող մի լաւ մարսեմ ասածներդ... երբ խաւարից յանկարծ ցերեկւայ լոյն ես գնում, միշտ աչքերդ խառնաշփոթւում են և ամեն բան իսկոյն չես նկատում... ժամանակ տուր մտքերս ժողովեմ...

— Հէնց որ ես սկսեցի այդ բաների մասին քեզ հետ խօսել, նկատեցի, որ բաւական լաւ զլխի տէր ես: Իսկ երբ մէկը խելք ունի, բաւական է նրան ճանապարհը ցոյց տալ—նա արդէն իր խելքով առաջ կցնայ: Առայժմ մնաս բարով, մի բան հարկաւոր լինելիս—դարձեալ եկ մօտս, մտերմաբար կիսունք:

---

Ստեփանի մօտից ես խելքս կորցրածի պէս հեռացայ: Գլխիս մէջ մտքերի մի ամբողջ հեղեղ կար: Մէկ մտքին յաջորդում էր միւսը... Ամբողջ գիշերը չքնեցի, միայն առաւտեան գէմ քունս վրա անցաւ:

Միւս օրը ման եմ գալիս և ինձ թւում է, թէ ես նորից յարութիւն եմ առել, կամ թէ չէ մէկը ինձ մի սարի վրա է բարձրացը և ես սկսում եմ հեռուն տեսնել... Լայն ու երկար տարածում է ազատ աշխարհը, միայն հեռաւում, կարծես մթութեան մէջ, անծանօթ երկիր է փուած...

Եւ ես մտածում էի, այո, երկրի վրա պէտք է արդարութիւն լինի: Խօմ մշտապէս մեզ վրա անարդարութիւնը չպիտի թաղաւորէ, խօմ մշտապէս այդ անարդարութիւնը մնակ—գիւղացիներիս իր խորամանկ կարգերով չպիտի վաթաթէ: Հէնց մեր գժբախտութիւնն էլ նրանումն է, որ մենք ամեն բան շուտ չենք կարողանում ըմբոնել: Օրինակի համար, ենթադրենք, թէ հոգերը համայնքի սեփականութիւնն են կազմում, և աշխատում ենք նրանից օգտել, ինչպէս որ արդարութիւնն է պահանջում, առանց ուրիշին զրկելու, բայց միհնոյն ժամանակ չենք մտածում, որ ամբողջ Ռուսաստանի ժողովուրդը պէտք է այդպիսի համայնքներ կազմէ և զրանք պէտք է թէ իրանց և թէ կալւածատիրական հողերը ընդհանուրի սեփականութիւն դարձնեն...

Կամ թէ չէ օրինակի համար մենք համայնական ջրաղաց կամ կարսիչ մեքենայ շինեցինք և դրանից օգուտ ստացանք. ինչ որ առաջ ջրաղացպանն ու կալւածատէրն իրանց օգտին էին վերցնում, այժմ համայնքի կարիքներին կզնայ: Սակայն զլխի չենք ընկնում, որ ամբողջ երկրում թէ երկաթուղիները, թէ ոսկու, պղընձի հանքերը, թէ գործարանները, թէ նաւերը պէտք է խլել համամարդկային օգտի համար: Կամ թէ չէ, ենթադրենք, զիւղի տանուտէրին հաշեւտուութեան ենք ենթարկում և նրա վրա վերահսկիչ ենք նշանակում և փոխում ենք, երբ անյարմար է լինում. իսկ միւս կողմից թոյլ ենք տալիս, որ ամբողջ երկրում մինխտարներն ու նահանգապետները անհաշիւ ու ինքնակամ տնօրինութիւններ անեն իրանց քէֆի համեմատ:

Եւ ես մտածում էի. շատ գժւար է այս աղայական խորամանկ կարգերը փշրել և կտորները քամուն տալ: Դրա համար արժէ կեսնքը զոհել: Սակայն ինչպէս այդ բանը զլուխ բերել:

Հէնց որ Ստեփանի հետ պատահեցի, իսկոյն այդ մասին խօսք բաց արի:

— Ինչ ասել կուգէ, ասաց Ստեփանը,— գժւար է այդ բանն իսկոյն անել, զեռ երկար—երկար տարիներ

են հարկաւոր, մինչև որ ժողովուրդը կկարողանայ իր կեանքը ճշմարտութեան ու արդարութեան վրա հիմնել։ Դեռ երկար ժամանակ պէտք է աշխատել, մինչև որ «ոսկէ գարը» դայ... Նախ և առաջ պէտք է աշխատել, որ չինեն չինովնիկներ, այլ կառավարէ ինքը ժողովուրդը իր ընտրեաների միջոցով. Երբ որ ժողովուրդի կեանքը թեթեանայ, նա կամրապնդի և կկարողանայ լի-ակատար ազատութիւն և երջանկութիւն ձեռք բերել։

— Իսկ առայժմ ի՞նչ անել։ Միթէ նստել ու սպասել։ Դու ինքդ գիտես, որ էլ համբերութիւն չմնաց։ Ա-մենախելօք գիւղացին անդամ երբեմն այնպիսի բաներ է խօսում, որ իսկոյն չորս կողմդ ես մտիկ տալիս, թէ չը-լինի թէ պրիստաւը կամ ուրեազնիկը լսէ։

Եւ եթէ այսպիսի շան կեանքը շարունակւի — ամ-բողջ ժողովուրդը քաղցից կմեռնի, համարեա ամեն տարի սովէ է լինում, նոյն իսկ առատ տարին կուշտ փորով հաց չենք ուտում։

Ճիշտ է, լսել եմ, որ ժողովուրդը մի քանի տեղե-րում սոքի է կանգնել, կալածատէրերից խլում է հացն ու տաւարը, այրում է նրանց ունեցւածքը, սակայն զրանից ես այնքան էլ մեծ բան չեմ սպասում։ Զօրք կուղարկեն, գիւղացիներին կծեծեն, կսպանեն և կրկին ամեն բան կհանդարտուի։ Եւ իսկապէս ի՞նչպէս մենք — գիւղացիներս կարող ենք նրանց հետ գլուխ գնել, զորքն էլ է նրանց ձեռքին, փողն էլ, նրանք մեզանից էլ լաւ են հասկանում։ Այսպիսով, ուրեմն, բանից գուրս է գալիս, որ գիւղացին ոչ մի ժամանակ բարիքի երես չի տեսնի, ուրեմն ոչինչ չի կարելի անել — սուս արա ու մեռի։

— Է՞ն, Անդրէաս, զու արդէն չափից դուրս ես վշտացած։ Վտանգաւոր է թշնամին, ճիշտ է, բայց Աս-տած ողորմած է։ Մենք գեռ կարող ենք նրա հախից գալ։ Մենք որտեղից կարող ենք այդպիսի ոյժին դէմ կենալ։

— Վերջապէս, սիրելիս, հասկացիր, որ նրանց ամ-բողջ զօրութիւնը հէնց մեր — գիւղացիներիս մէջ է։ Ինչ-քան են որ նրանք — մի բուռը, փշեմ իսկոյն կանհետա-

նան, իսկ մենք-գիւղացիներս միիհօններ ենք կազմում։ Նրանց զօրքը որտեղից է, չէ՞ որ հէնց մեր գրանից։ Եթէ գիւղացին խելքի գայ — այն ժամանակ արդէն ուրիշ եղանակ դուրս կգայ։ Եթէ զինուորները — մեր եղ-բայրները մեր կողմն անցնեն և դուրս գան օֆիցիեների ու զեներաների դէմ, եթէ մենք գիւղացիներս նրանց փող չվճարենք ու նրանց դաշտերում չաշխատենք։ Եթէ բանուորները զործարաններում նրանցից խլեն այն, ինչ որ նրանք խլել են մեզնից ու մեր պապերից, ի՞նչ ես կարծում, Անդրէաս, նրանք մէծ ոյժ կունենան։ Իսկ որ նրանք բոլորն էլ մի արտի ցորեն են, այդ տատս էլ գի-տէ։ Նրանք բոլորն էլ, համարեա, մեր եղբայր — գիւղա-ցուն թշնամի են։ Բայց նրանց մէջ էլ շատ կեղծիքներ ու ձնշումներ են կատարում։ Նրանցից ամեն մէկը աշ-խատում է ամենախոշոր և ամենահամեղ պատառը խլել։

Նրանցից ամեն մէկը աշխատում է միւսին խարել, գրանը մաքրազարդէլ։ Եւ ամեն բան նրանց մէջ հիմ-նւած է գողութեան ու խարդախութեան վրա։ Նրանց բոլոր խորամանկ կարգերը միենոյն արմատից են սնունդ առնում։ ոչ ոքի մի հաւատաց, քաշիր ինչքան որ կարող ես, իսկ խիզճը — սատանայի բաժին։

Ոչ, բարեկամ, երբ իսկական գողերն իրար զլխի են հաւաքւած լինում, նրանք երբէք մի խօսքի չեն կա-րող գալ։ Իսկ ի՞նչ վերաբերում է սւաման, զու շատ ճիշտ նկատեցիր, որ տգիտութիւնը մեր ճանապարհը կտրում է, բայց չէ՞ որ կը թութիւնն էլ կարելի է ձեռք բերել։ Օ-րինակի համար. մի ժամանակ ես էլ աղէտ էլ բացատրում եմ, թէ ի՞նչ բան են խորամանկ կար-գերը։ Այդպէս էլ միւսը, երրորդը, տասերորդը, բանե-րորդը և այն։

Այժմ, սիրելիս, համարեա մի խուլ անկիւն չկայ, որ մի կարգացող չինի, իսկ աւելի մեծ գիւղերում այդ-պիսիների թիւը տասնեակների է համառում։ Իսկ գրել-կարգալ գիւղեցողի համար, եղբայր, ամբողջ ճշմարտու-թիւնը, արդարութիւնը պարզ է, որովհետեւ գրերում այդ բոլորը գրւած է։

— Ճիշտ ես ասում, ապա ինչու ես այդպիսի գիրք չեմ տեսել:

—Տեղը չես իմացել, զրա համար էլ չես տեսել, պատասխանեց Ստեփանը և իր կօշիկի միջից դուրս հանեց երկու փոքրիկ զբոյլ, կարմիր շապիկով. մէկի վրա արհեստաւոր էր նկարած և վրան էլ զրած էր «Անարդար վիճակ», իսկ միւսի վրա զրած էր—«Հոգի մասին զրոյցներ»—և տւեց ինձ, վերցրի ես զրբոյկները, շուռ տւի զրած էր «Գրաքնիչից թոյլատրւած է», այդ ես արդէն գիտէի, թէ ինչ է նշանակում, ուրեմն իշխանութիւնը թոյլ է տւել ծախելու:

—Է՞ն, այս տեսակ զրքեր ես բազարում շատ եմ տեսել, ասացի ես:

—Հէնց բանն էլ նրանումն է, որ այս զրքերը միայն արտաքինով են նման ուրիշ զրքերին: Իսկապէս սա հասարակ գիրք չէ, սա այն տեսակներից չէ, որ իշխանութիւնը խրախուսում է: Սյս զրքոյկները մեր բարեկամներն են հրատարակել և նրա մէջ կայսերական ազատութեան մասին ամեն ինչ պարզ զրել են. թէ մեզ թագաւորը ինչ տեսակ ազատութիւն է շնորհել և թէ մենք ինչ ձեռվ պէտք է մեր իսկական ազատութիւնը ձեռք բերենք: Միայն վրայի շապիկը ստիպւած միւս զրքերի նման են արել, որպէսզի հեշտ լինի իշխանութեան աշքից ծածկել այս տեսակ զրբոյկները:

Նա զլսի չի ընկնի, թէ սա այն զրքերիցն է, որ մեզանում հրամայւած է բռնել, կամ եթէ նոյն իսկ կարգայ ու հասկանայ և քեզ վրա յարձակւի, դու միշտ կարող ես արդարանալ ասելով «Ես ի՞նչ իմանամ, թէ վնասակար գիրք է, վրան զրւած է, որ թոյլատրւած է»:

Ճիշտն ասած, ես զարմացած էի մնացել: Բան չունեմ ասելու, լաւ կարգեր են, ինչ տեսակ միջոցների պէտք է զիմել, ճշմարտութիւնն ասելու համար: Եւ յանկարծ ցանկութիւն զգացի իմանալու, թէ ովքեր են այս ճշմարիտ զրքոյկները զրում ու հրատարակում:

—Պարոն Ստեփան, ի հարկ է այս զրբոյկները

զրողները ուսեալ մարդկանցից, տիրապետող դաստկարգից են:

—Իհարկ է: Զէ որ ամենի մէջ էլ կան խղճմտանքով մարդիկ: Ում սիրալ որ քար է, նա այդ մասին իսկի չի էլ մտածէ: Բայց չէ որ կան այնպիսիները, որոնց համար արդարութիւնը ամեն բանից էլ թանկ է: Այդպիսիներն այդ անում են ոչ թէ շահասիրական նըպատակով, այլ իրանց հոգու, իրանց խղճի համար: Ահա այսպիսով տիրող դասակարգից դուրս եկան սօցիալիստները, որոնք բռնել են մեր ձեռքից: Ահա սրանք են մեր մէջ այս զրբոյկները տարածողները:

Ես մտածմունքի մէջ ընկայ:

—Ի հարկ է կառավարութիւնն այդ բանի համար նրանց ճակատը չի համբուրէ:

—Ինչպէս չէ: Միթէ նրանցից քչերն են բանտերում նստած, Սիրիր աքսորւած ոճրագործների նման: Մեր փողերից այժմ ինչքան են ծախսում ոստիկանաների ու ժանդարմների վրա, այդպիսիներին բռնելու և հեռու քշելու համար: Տարեց տարի իշխանութիւնը քանի գնում աւելի է շատացնում իր այդ ծախսը:

Ուրիշ կերպ չի էլ կարող անել. այժմ սօցիալիստներ ամեն տեղ կան. բանտորների մէջ նրանք այնքան են շատացել, որ ոստիկանութիւնը չի կարողանում զլուխ գնել: Այժմ էլ նրանք մեր զիւղացիների մէջ են երեսում: Իզուր չէ այս տարի մինիստրութիւնը ոստիկանական նոր ստրաժներներ կարգել զիւղերի վրա և վրա համար քիչ ժողովրդական փողեր չի գնայ:

—Բարեկամ, ուրիշ խօսքով ասած, իմ սեփական ձեռքով իմ քիթ ու պառևսպ են ջարդում:

Ահա թէ աշխարհիս բաներն ինչ տեսակ են: Իսկ պարոն Ստեփան, բանտորների մէջ այդ բանը շատ է առաջ գնացել:

—Իհարկէ: Միայն այսքանը քեզ օրինակ, որ ամեն տեղ գործադուլ, հա գործադուլ:

—Իսկ այդ ի՞նչ բան է:

—Գործադուլը: Մեր լեզուով ասած՝ բանթող: Օրի-

Նաևի համար, եթէ միորեկ գործարանում բանւորներին շատ են ճնշում, նրանք սկսում են իրանց ոյժը փորձել տիրոջ վրա: Ազգայում քաղցրութեամբ աշխատում են համոզել տիրոջը կամ կառավարչին, թէ «վարձադինը այս քանով աւելացրու», կամ թէ չէ «ոչնչացրու անխղմը՝ տանք տուգանքները», կամ թէ չէ «բանւորական օրը մի ժամով կարձացրու»—մի խօսքով ինչոր նրանց շատ է ճնշում, հազ ու մաշ անում, այն էլ պահանջում են ոչնչացնել:

Եթէ գրասենեակը նրանց պահանջը արդարութեամբ չի կատարում, բոլոր բանւորները միանգամից թողնում են գործը և չեն աշխատում, մինչև որ իրանց արդար պահանջը կատարի: Ինարկէ այս տեսակ բանթողից գործարանատէրը մեծ վաս կունենայ. դրա համար էլ կը կատարէ նրանց պահանջը: Ահա այսպիսի գործադուլների ժամանակ սօցիալիստներն օգնում են բանւորներին: Դրա համար էլ վերջիններս բաւական բան ստացել են: Այժմ էլ շատ տեղերում «հող և ազատութիւն» են պահանջում:

—Այ, դա շատ լաւ բան է: Բայց ինչու այդ մինոյն սօցիալիստները չեն գալիս մեր—գիւղացիներիս մէջ:

—Ինչպէս թէ չեն գալիս: Մեր մէջ էլ են գալիս, գրեր էլ են տարածում: Դու ինքդ գատիր, մօտ 100 միլիոն գիւղացիներ կան, նեշտ է բոլորի մօտ լինել:

—Այս, իսկապէս: Մեր բանը վատ է:

—Ո՛չ մի վատ բան չկայ. միայն հարկաւոր է ձեռքերը ծալած չնատել, այլ անել այն, ինչ որ սօցիալիստներն են անում:

—Իսկ ի՞նչ են անում նրանք:

—Ահա թէ ինչ: Օրինակի համար ովքեր են մեզանում աւելի հասկացողները և ովքեր կարող են մեզ հաւատարիմ լինել, ասենք՝ Մարկոս, Փիլիպոս, Կիրակոս: Ահա դրանց կհրաւիրենք, մեզ մօտ և 5 հոգուց մի միութիւն կկազմենք. մէկ-մէկու խօսք կատանք միմեանց ամուր բռնել, ամեն գործում համերաշխ լինել և ամեն

բան ընդհանուր հաւանութեամբ կատարել:

Մեր ընդհանուր գործը առայժմ կլինի—բոլորի աչքերը բաց անել և ճշմարտութիւնը հասկացնել: Գիւղական ժողովներում մենք համերաշխ կերպով կլանզնենք ճշմարտութեան համար, չենք ենթարկուի հարուստների ու վաշխառուների կամքին: Մենք կհամոզենք մեր գիւղացիներին ու հարևան գիւղերին, որ կալւածատէրերից հողը արդար արժէքից թանկ չվերցնեն կապալով և շընչին գնով չգնան նրանց մօտ աշխատելու: Եթէ մենք միացած լինինք, կալւածատէրերն ու վաշխառուները չեն կարողանայ մեզ յաղթել:

Եթէ շրջակայ գիւղերի գիւղացիները աշխատանքի ամենաթունդ ժամանակը հրաժարւեն օրով աշխատելուց, կամ հողը կապալով գիւղացիներուց—ի՞նչ պիտի անեն նըրանք: Խօմ չեն կարող հեռու տեղերից նոր բանւորներ բերել տալ. վերջապէս ձեռընտու էլ չէ: Երբեմն ամեն մի ժամը շատ թանկ արժէ, իսկ այստեղ արի ու բանւոր ճարէ:

Իսկ կապալառուներ հեռու տեղից բերել տալը խօմ աւելի գժւար է: Եթէ այդ էլ չօգնէ, եթէ իշխանաւորներն սկսեն արգէն շատ նեղել գիւղացիներին, միթէ ուրիշ միջոցներ քիչ կան նրանց կոտրելու և խելքի բերելու համար, Միայն հարկաւոր է գործը ինելացի կերպով առաջ տանել...

Միջոցներ, վառք Աստուծոյ, կպանենք: Մեր հարեան գիւղի պրիմատուր շատ է խելօքացել այն օրւանից, երբ մեր ջահեները նրա կողերը մի քիչ ջարդեցին:

—Ճեսնում ես: Դու ինքդ երևակայիր. Եթէ բոլոր գիւղերում այդ տեսակ ընկերակցութիւններ լինին և իրար մէջ գաղանի խորհուրդ պահեն, գիտե՞ս ինչ ոյժ կստացվի: Դրա վրա աւելացրու նաև քաղաքների բանւորներին ու ուսանողներին: Եթէ սրանք բոլորն իրար բռնեն, իշխանութիւնն այլիս չի իմանայ, թէ որ կողմը հասնի:

Եթէ մի քաղաքում, ենթագրենք, բանւորներին ու ուսանողներին խաղաղացրին, որ հող ու ազատութիւն

Այլ  
այլ 2

— 48 —

Են պահանջում, մէկ էլ տեսար զիւղում միևնոյն պահանջն են անում, նոյն իսկ կալւածատէրերի հողերն են խլում: Իշխանութիւնն այդտեղ է վագում, մէկ էլ տեսար մի երրորդ տեղում խառնւեցին՝ պրիստաւին վոնդեցին: Բնչ ես կարծում, այս կերպով, ինչքան էլ զինւորներ ու սատիկաններ լինին, ամբողջ Ռուսաստանի համար չեն կարող բաւականացնել:

— Այս, շատ լաւ ես ասում: Նրանց խորամակ կարգերի զիւմաց մենք աւելի խորամանկը բաց կթողնենք:  
— Պահ, պահ, պահ... ինչպէս...

— Այդպէս ուրեմն, եղբայր Ստեփան... Ահա իմ ձեռքը: Բնկերութիւն կազմիր, ես էլ քեզ հետ կլինեմ, հարեան զիւղից էլ Պետրոս Առագեանին կհրաւիրեմ, վստահելի, խելացի տղայ է: Նա էլ իրանց զիւղում գործը առաջ կտանի:

— Տես, ուրիշ ոչ ոքի բան չասես:

— Ինչ ես խօսում, միթե ես երեխայ եմ:

Այս գործը պէտք է մեծ զգուշութեամբ առաջ տանել: Մենք էլ այդպէս որոշեցինք Ստեփանի հետ:

Հաւատացէք, եղբայրներ, այն օրւանից կարծես մի քար ընկաւ կրծքիս վրայից: Եթէ մեր գործը առաջ զնակայդ տեսակ միաւթիւնները մեր մէջ տարածւեն—այնժամանակ աղայական բոլոր խորամանկ կարգերը գլխիվայր կդառնան:



«Ազգային գրադարան



NL0210241

